



*Հերագորական խմբի ղեկավար՝*  
ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ԹԱՎԱԴՅԱՆ  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

*Հերագորական խմբի անդամներ՝*  
Հ.Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
Տ.Հ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Վ.Թ. ՆԱԼՉԱԶՅԱՆ  
Ա.Ա. ԹԵՎԻԿՅԱՆ  
Ն.Հ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

## ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ե Ր Ե Վ Ա Ն

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2014

ՀՏԴ 330.101.541  
ԳՄԴ 65.01  
Մ 188

**Հրատարակության և երաշխավորել  
ՀՊՏՀ գիտական խորհուրդը**

**Մասնագիտական խմբագիր՝**  
**Թերզյան Տ. Հ.**  
ֆ.մ.գ.թ., դոցենտ

**Գրախոսներ՝** **Բայադյան Ա. Հ.**  
տ.գ.դ., պրոֆեսոր  
**Սարգսյան Վ. Ա.**  
տ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**  
**Աթոյան Կ. Լ.** (նախագահ)  
տ.գ.դ., պրոֆեսոր  
**Վարդանյան Գ. Ի.**  
տ.գ.դ., պրոֆեսոր  
**Սուվարյան Յու. Մ.**  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր  
**Ավետիսյան Ս. Ս.**  
տ.գ.դ., պրոֆեսոր

**Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում /**  
**Մ 188** Ա. Թավադյան և ուրիշներ.– Եր.: Տնտեսագետ, 2014 –76 էջ.–(«Ամբերդ» մատենաշար):

Աշխատանքում համակարգված տեսքով ներկայացված են ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և զարգացման միտումները: Վերլուծված է ՀՆԱ-ի և արտադրության ծավալների դինամիկան ըստ ոլորտների, ՀՀ տնտեսության զարգացման հեռանկարները և հնարավոր ռիսկերը:

Հետազոտված է ՀՀ տնտեսական աճի վրա ներքին տնտեսական գործոնների ազդեցությունը: Ձևակերպված է համապատասխան էկոնոմետրիկ մոդել: Գնահատված է համախառն կապիտալի, մարդկային կապիտալի, աշխատուժի աճի տեմպի ազդեցությունը տնտեսական աճի տեմպի վրա:

Հետազոտությունը կարող է օգտագործվել մակրոտնտեսական իրավիճակը և դինամիկան համակողմանի վերլուծելու համար և ՀՆԱ-ի աճի վրա տարբեր գործոնների ազդեցության գնահատման համար:

ՀՏԴ 330.101.541  
ԳՄԴ 65.01

ISBN 978-9939-61-094-8

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2014 թ.  
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014 թ.

Ներածություն.....	5
1. ՀՀ 2000–2012 թթ. մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող ցուցանիշների վերլուծությունը.....	6
2. ՀՀ տնտեսական աճի վրա ներքին տնտեսական գործոնների ազդեցության հետազոտումը .....	69
Օգտագործված գրականության ցանկ.....	72
Անփոփումներ .....	73



Աշխատանքում համակարգված տեսքով վերլուծված է ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող ցուցանիշները: Դա հնարավորություն է տվել գնահատել մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան:

- Աշխատանքում կատարված է ԱՊՀ երկրների, Վրաստանի և Մերձբալթիկայի համախառն ներքին արդյունքի համեմատական վերլուծություն: Ցույց է տրվել, որ ամենաբարձր անկումը ճգնաժամի պատճառով եղել է Հայաստանում, Ուկրաինայում և Մերձբալթիկայի երկրներում: Հիմնավորվել է, որ դրա պատճառը հիմնականում ներքին շուկայի զարգացումն է, որում մեծ դեր ունեն վարկերը, գրանտները և տրանսֆերտները:
- Զարգացման փուլում երկրի տնտեսության խթանումը պահանջարկի տեսանկյունից պահանջում է բարձրացնել աշխատանքի վարձատրության բաժինը ՀՆԱ-ում, նվազագույն աշխատավարձի և թոշակների մակարդակը համապատասխանեցնել նվազագույն կենսամակարդակին: Դա նաև թույլ կտա երկրում գործող արտասահմանյան կապիտալով բազմաթիվ ձեռնարկությունների եկամտի ավելի մեծ մասը թողնել երկրում աշխատավարձի ձևով: Հիմնավորված է, որ այդ գործընթացը պետք է կատարվի աստիճանաբար:
- Վերլուծված է օտարերկրյա ուղղակի և համախառն ներդրումների հոսքերը ՀՀ-ում: Գնահատված են դրանց օգտագործման ուղղությունները և դրանց ազդեցությունը տնտեսական աճի վրա:
- Վերլուծված է ՀՀ արտաքին առևտուրը բնութագրող ցուցանիշների կառուցվածքը և դինամիկան: Ներկայացվել է ՀՀ ապրանքների արտահանման և ներմուծման աշխարհագրական կառուցվածքը: Գնահատված է ազգային արժույթի փոխարժեքի, գնաճի ազդեցությունը այդ ցուցանիշների վրա:
- Վերլուծված է ՀՆԱ-ի և արտադրության ծավալների դինամիկան ըստ ոլորտների, ՀՀ տնտեսության զարգացման հեռանկարները և հնարավոր ռիսկերը: Հետազոտված է ՀՀ տնտեսական աճի վրա ներքին տնտեսական գործոնների ազդեցությունը: Ձևակերպված է համապատասխան էկոնոմետրիկ մոդել: Գնահատված է համախառն կապիտալի, մարդկային կապիտալի, աշխատուժի աճի տեմպի ազդեցությունը տնտեսական աճի տեմպի վրա:
- Հետազոտությունը կարող է օգտագործվել մակրոտնտեսական իրավիճակը և դինամիկան համակողմանի վերլուծելու համար և ՀՆԱ-ի աճի վրա տարբեր գործոնների ազդեցության գնահատման համար:

## ՀՀ 2000–2012 թ.թ. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

### Ընդհանուր նկարագրություն

1990-ական թվականների սկզբներին դարաբաղյան հակամարտությունը, միութենական տնտեսական կապերի խզումը և հայ-թուրքական սահմանի փակումը հանգեցրին լուրջ տնտեսական անկման: Հայաստանը չունի բնական էներգետիկ ռեսուրսների մեծ պաշարներ, ինչպիսիք են նավթը և գազը, որոնց արտահանումը կարող էր մեղմացնել ծագած դժվարությունները: Ձևավորված համաշխարհային տրանսպորտային ենթակառուցվածքներից արհեստականորեն ստեղծված տրանսպորտային մեկուսացումը, բարձր լեռնային ռելյեֆը, դեպի ծով ելքի բացակայությունը երկրի տնտեսաշխարհագրական դիրքը դարձնում են ոչ շահեկան:

Շատ գործարաններ և ֆաբրիկաներ դադարեցրին աշխատանքը հումքի և էներգոռեսուրսների բացակայության պատճառով, գյուղատնտեսությունը վերադարձավ մանրապրանքային տնտեսությանը: Տնտեսական անկման և նրա մասշտաբների վրա ազդող մյուս գործոնների մեջ անհրաժեշտ է նշել իրականացվող ռեֆորմների բնույթը, դրանցում թույլ տրված սխալները: Անկման մեծության վրա ուժեղ ազդեցություն ունեցան տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները և գնային համամասնությունների կտրուկ փոփոխությունները:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ի տվյալներից՝ այդպիսի անկումից չի խուսափել ետխորհրդային երկրներից և ոչ մեկը: 90-ականների անկման հետևանքով ինչպես Հայաստանը, այնպես էլ նախկին բոլոր միութենական հանրապետությունները ետ մղվեցին համաշխարհային տնտեսության ծայրամասերը, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով վերադարձան շատ տարիներով դեպի անցյալ:

1990–1999 թթ. Տնտեսական անկումը ԱՊՀ երկրներում,  
Վրաստանում և Մերձբալթիկայում

Երկրներ	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, \$ 1990 թ.	Երկրի դիրքը 1 շնչին ընկնող ՀՆԱ-ով	ՀՆԱ ինդեքսը 1999 թ., 1989 թ. = 100	Ամենախորը տնտեսական անկման տարին
Ուզբեկստան	645	13	92.3	1995
Բելառուսիա	1686	5	78.2	1995
Ղրղզստան	608	14	60.4	1995
Ղազախստան	1603	6	60.2	1995
Ռուսաստան	3480	1	56.1	1998
Թուրքմենստան	874	10	51.2	1997
Ադրբեջան	1248	9	45.2	1995
Տաջիկստան	487	15	44.1	1996
<b>Հայաստան</b>	<b>664</b>	<b>12</b>	<b>42.5</b>	<b>1993</b>
Ուկրաինա	1569	7	35.7	1999
Վրաստան	1407	8	33.8	1994
Մոլդովա	817	11	30.5	1999
Էստոնիա	3130	2	75.7	1994
Լիտվա	2840	3	65.4	1994
Լատվիա	2750	4	60.1	1995

**Մակրոտնտեսական միջավայրը**

Հայաստանի տնտեսական զարգացումը սահմանափակող շրջափակումը, դրա հետ կապված տրանսպորտային ծախսերի ավելացումը համաշխարհային շուկայում իրականացվող առևտրում և պաշտպանության բարձր ծախսերը միասին ձևավորել են երկրի տնտեսական զարգացման յուրահատուկ մոդել: Վերջինս ապահովեց բավական բարձր զարգացման տեմպեր և մակրոտնտեսական կայունություն ընդհուպ մինչև 2008 թ.:

2000–2007 թվականներին ետխորհրդային երկրները համաշխարհային տնտեսության արագ զարգացող տարածաշրջանն էին: Այդ ժամանակաշրջանում Հայաստանի և ԱՊՀ երկրների ներքին պահանջարկի աճը տարեկան բնութագրվում էր երկնիշ մեծություններով մաքուր արտահանման բացասական ցուցանիշների պայմաններում: Սակայն, ըստ երկրների տնտեսական աճի տեմպերը խիստ տարբերվում էին: Ադրբեջանում և Թուրքմենստանում ՀՆԱ-ն ավելացել էր 4 անգամ, Տաջիկստանում՝ 2,3 անգամ: Ավելի քան երկու անգամ ՀՆԱ-ն աճեց Հայաստանում, 2 անգամ Ուզբեկստանում և Բելառուսում, համարյա 2 անգամ Վրաստանում: Մնացած երկրներում աճը կազմում էր 1,5–1,7 անգամ:

ՀՆԱ դինամիկան ԱՊՀ երկրներում, Վրաստանում և Մերձբալթիկայում (հաստատուն գներով)

Երկրներ	Աճի տեմպը, %						Ֆիզիկական ծավալի ինդեքսը, %		
	Միջին տարեկան		Նախորդ տարվա նկատմամբ						
	1990-2000	2000-2008	2009	2010	2011	2012	2000-ը 1991-ին	2011-ը 2000-ին	2012
Ուզբեկստան	-0.2	6.6	8.1	8.5	8.3		98.6	211.2	108.2
Բելառուսիա	-1.6	8.6	0.2	7.7	5.3		89.7	213.8	101.5
Ղրղզստան	-4.1	4.4	2.9	-1.4	5.7		72.2	156.4	99.1
Ղազախստան	-4.1	9.5	1.2	7.3	7.5		78.0	237.6	105.0
Ռուսաստան	-4.7	6.7	-7.8	4.0	4.3		70.8	165.8	103.4
Թուրքմենստան	-4.9	14.5	6.1	9.2	14.7		...	397.6	111.1
Ադրբեջան	-6.3	18.1	9.3	5.0	0.1		59.3	403.0	102.2
Տաջիկստան	-10.4	8.6	3.9	6.5	7.4		41.0	234.1	107.5
<b>Հայաստան</b>	<b>-1.9</b>	<b>12.4</b>	<b>-14.1</b>	<b>2.1</b>	<b>4.6</b>		<b>76.8</b>	<b>225.6</b>	<b>107.6</b>
Ուկրաինա	-9.3	7.2	-14.8	4.2	5.2		47.4	159.9	100.2
Վրաստան	-7.1	8.1	-3.8	6.3	7.0		47.5	195.9	
Մոլդովա	-9.6	6.3	-6.0	6.9	6.4		42.0	175.7	99.8
Էստոնիա	0.5	6.7	-14.3	2.3	7.6		102.9	153.2	
Լիտվա	-2.7	8.1	-14.8	1.4	5.9		76.4	160.2	
Լատվիա	-1.5	8.0	-17.7	-0.3	5.5		86.0	150.9	

Աղբյուրը՝ կազմված է Համաշխարհային բանկի, ԱՄՀ, ԱՊՀ վիճակագրական կոմիտեի և ԱՎԾ-ի տվյալներով

Տնտեսության աճի բարձր տեմպերը սկզբնական տարիներին պայմանավորված էին ցածր բազայով, որը հետևանք էր 90-ական թվականների աննախադեպ տրանսֆորմացիոն անկման: Տեղի էր ունենում արտադրության վերականգնողական գործընթաց, մակրոտնտեսական կայունացում, շուկայական բարեփոխումների առաջխաղացում: ՀՆԱ աճի բարձր տեմպերը շատ բանով պայմանավորված էին նաև արտաքին առևտրի դինամիկ աճով: Արդեն 2005 թ. ԱՊՀ երկրները գերազանցեցին արտահանման, իսկ 2007 թ. ներմուծման խորհրդային՝ 1991 թ. մակարդակը: Սակայն 2008 թ. փոխադարձ առևտրի ծավալները դեռևս ետ էին մնում 1991 թ. մակարդակից՝ արտահանման գծով կազմելով 80%, ներմուծման գծով՝ 91,9%: 2009 թ. այս ցուցանիշը էլ ավելի վատացավ՝ 53,7% արտահանման համար և 61,3% ներմուծման: Այսինքն՝ ԱՊՀ երկրների տնտեսական աճը, առաջին հերթին, պայմանավորված էր հեռավոր արտասահմանի հետ արտաքին տնտեսա-



կան կապերի սերտացմամբ հետ, որտեղ կայուն տեմպերով աճում էր վառելիքահումքային ապրանքների նկատմամբ պահանջարկը: Բացառություն չէր նաև Հայաստանը իր ավանդական արտահանման հումքային ապրանքներով՝ մոլիբդենով և պղնձով:

Արտահանումից ստացվող եկամուտները խթանեցին ներքին պահանջարկը, որը մեծամասամբ բավարարվում էր երրորդ երկրներից ներմուծվող ապրանքներով ու տեխնոլոգիաներով: Ընդ որում, այդ տարիներին այս երկրները միջազգային ոչ մի նոր մասնագիտացում ձեռք չբերեցին: Տնտեսական աճը հենվում էր ավանդական ճյուղերի, հիմնականում վառելիքահումքային ոլորտի վրա: 2006–2007 թթ. Հայաստանում և ԱՊՀ երկրների մեծ մասում վերականգնողական աճը ավարտվել էր, և տնտեսությունները ինտեգրվել էին համաշխարհային տնտեսությանը: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ արտաքին գործոնների ազդեցությունը տնտեսական զարգացման վրա եղել է բավական շոշափելի:

Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ետխորհրդային յուրաքանչյուր երկրի տնտեսական աճի հիմքում ընկած են տարբեր գործոնների առանձնահատուկ համակցություններ, որոնք ձևավորել են թողարկվող ապրանքների ու ծառայությունների նկատմամբ արտաքին ու ներքին պահանջարկը: Հայաստանում աճի այդպիսի գործոն դարձավ անշարժ գույքի նկատմամբ պահանջարկը՝ հատկապես հայկական սփյուռքի և աշխատանքային միգրանտների կողմից: Բացի դրանից, Հայաստանի տնտեսական աճի մեջ կարևոր դեր խաղացին մասշտաբային միջազգային օգնությունը և ձեռնարկատիրական գործունեության ազատականացումը: Տնտեսական աճի բարձր տեմպերը հաջողվում էր պահպանել հիմնականում ներդրումային ակտիվության շտրիիվ:


Հայաստանի պայմաններում տնտեսության այդպիսի կարևոր ոլորտ դարձավ շինարարությունը: 2000–2008 թթ. շինարարության և անշարժ գույքի գործարքների բաժինը ավելացված արժեքի մեջ 16,2%-ից հասավ 34,9%-ի: Այդպիսի տպավորիչ տեմպերով աճ ոչ մի այլ ճյուղում չարձանագրվեց: Նախկինում Հայաստանի առաջատար ճյուղերը՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, զարգանում էին շատ ավելի դանդաղ: Դրա հետևանքով գյուղատնտեսության բաժինը ավելացված արժեքում 25,5-ից իջավ 17,7%-ի, իսկ վերամշակող արդյունաբերությանը՝ 18,5-ից մինչև 9,3%: Արդյունաբերությունը աճում էր խիստ դանդաղ տեմպերով՝ հիմնականում շտրիիվ գունավոր մետալուրգիայի լեռնահանքային, ոսկերչական և շինանյութերի արդյունաբերության:

Այսպիսով, վերջին 12 տարիներին Հայաստանի տնտեսության զարգացման դինամիկան համընկել է համաշխարհային տնտեսական աճի միտումներին: 2000–2008 թթ. միջին տարեկան աճի տեմպերը եղել են 11,2%,

որի շնորհիվ արդեն 2003 թ. վերականգնվեց խորհրդային վերջին տարվա՝ 1990 թ. ՀՆԱ ծավալը:

### Տնտեսական աճի բաղկացուցիչները

Հայաստանի վիճակագրական ծառայության տվյալներով 2012 թ. երկրի տնտեսական աճը ապահովել են չորս հիմնական ճյուղեր: Արդյունաբերության իրական աճը եղել է 5,7%, 1%-ով նպաստելով տնտեսական աճին, գյուղատնտեսությունը՝ 9,5%, 1,9%-ով նպաստելով տնտեսական աճին, ծառայությունները՝ 8%, 3,2%-ով նպաստելով տնտեսական աճին: Հետճգնաժամային տարիներին առաջին անգամ աճ գրանցվեց շինարարական ոլորտում 0,2%-ի չափով, որը նպաստեց տնտեսական աճին 0,1%-ով:



#### Գծապատկեր 1

2011–2012 թթ. ՀՀ տնտեսական աճին նպաստող ճյուղերի մասնաբաժինները, %

2012 թ. արդյունաբերական արտադրությունը աճեց 8,8%՝ նախորդ տարվա համեմատ, ընդ որում, լեռնահանքային արդյունաբերության մեջ աճը եղավ 14,7%, վերամշակող արդյունաբերությունում՝ 5,9, իսկ էլեկտրաէներգիայի արտադրության մեջ՝ 11,4%:

2012թ. նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական արտադրանքի աճը իրական արտահայտությամբ կազմեց 9,8%: Ճգնաժամից հետո առաջին անգամ նկատվեց բնակչության կողմից շինարարության ֆինանսավորման աճ 26,7%: 10,8%-ով ավելացավ նաև ծառայությունների ծավալը, որը պայմանավորված էր ֆինանսական ծառայությունների և ապահովագրական գործունեության 20,7% աճով:

### **Տնտեսական աճը պայմանավորող գործոնները**

2008-ին Հայաստանում տնտեսական աճի տեմպերը, համեմատած նախորդող տարիների հետ, էապես դանդաղեցին: Արդեն տարվա վերջին եռամսյակում տնտեսությունը սկսեց կրել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը, ինչի հետևանքով տարեկան աճը կազմեց ընդամենը 6.9%: Այնուհանդերձ, 2008-ին երկրում ստեղծված նոր արդյունքի կամ եկամուտների մակարդակը, նախորդող տարիների շարունակական աճի արդյունքում, իրական արտահայտությամբ ավելի քան կրկնակի գերազանցեց 2000 թվականի, մոտ 3 անգամ՝ 1995 թվականի և մոտ 1.7 անգամ՝ 1990 թվականի մակարդակները:

Իրավիճակը փոխվեց 2009 թ., երբ մի շարք գործոնների ազդեցությամբ ՀՆԱ ծավալը կրճատվեց 14,1%-ով: Ետճգնաժամային տարիների վերլուծություններում որպես այդպիսիք առանձնացվում են հետևյալ գործոնները.

*Արտաքին տրանսֆերտների հոսքերի կրճատումը:* Այս պատճառաբանությունը կարելի է ընդունել մասնակիորեն, քանի որ կապիտալի գուտներհոսքի կրճատումը բավական արագ փոխհատուցվեց արտաքին վարկերի ձեռք բերմամբ:

*Տարեկան օլիգարխիկ (հաճախ մոնոպոլ) բնույթը:* Հետաքրքրական է, որ տնտեսական անկման ամենաբարձր ցուցանիշները գրանցվեցին եռխորհրդային (ԱՊՀ և Եվրոպայի նախկին սոցիալիստական) երկրներում: Այնինչ ԱՄՆ-ը, որտեղից սկսվել էր ճգնաժամը, ունեցավ ընդամենը 3% անկում: Տնտեսության կենտրոնացումը թույլ չի տալիս գների անկում, որը կնպաստեր զանգվածային սպառման աճին և, հետևաբար, պահանջարկի ավելացմանը, սա էլ իր հերթին՝ ճգնաժամի հետևանքների մեղմմանը:

*Աղքատության բարձր մակարդակը:* Խնայողությունների բացակայությունը բնակչության մի ստվար շերտի հնարավորություն չի ընձեռում սպառումը պահել նախկին մակարդակի վրա, ինչը բերում է պահանջարկի կրճատում: Իսկ պահանջարկի խթանումը, ինչ-ինչ պետական լծակների օգնությամբ, հանգեցնում է բյուջեի պակասուրդի ավելացմանը: Մյուս կողմից՝ հարկային համակարգում ավտոմատ կայունարարների բացակայությունը անկման պայմաններում, թեև թույլ չի տալիս պակասուրդի առավել խորացում, սակայն չի էլ նպաստում արտադրության ծավալների ավելացմանը, քանի որ այն սահմանափակված է ցածր պահանջարկով:

*Մտերկրի գործոններ:* Մասնավորապես՝ տնտեսական քաղաքականության մեջ թույլ տրված սխալները: Արդարացված չէին 2008–2009 թթ. կատարված խոշորածավալ ներարկումները դրամի փոխարժեքը կայուն պահելու համար, այն դեպքում, երբ նրա արժեզրկումը կնպաստեր արտահանման ծավալների խթանմանը: Իհարկե, ճգնաժամի ընթացքում մետաղների


համաշխարհային գների անկումը բացասաբար էր անդրադառնում արտահանման ծավալների վրա, սակայն դրամի արժեզրկումը կարող էր նվազեցնել այդ ազդեցությունը: Բացասական ազդեցություն ունեցան ճգնաժամին ուշացումով արձագանքելը, հակաճգնաժամային միջոցառումների իրականացման դանդաղությունը, այդ միջոցառումների մի մասի ոչ ճիշտ ընտրությունը:

**Մակրոուսրեսական քաղաքականություն:** Աշխարհի փորձը ցույց էր տալիս, որ ճգնաժամի դեմ առավել արդյունավետ էին այն միջոցառումները, որոնք խթանում էին ամբողջական պահանջարկը: ԱՄՆ-ում սկզբնական շրջանում ֆինանսական համակարգի և արդյունաբերության մեջ կատարվող ներարկումները, ըստ էության, դրական արդյունքների չհանգեցրին: Մոնետարիստական քաղաքականությունը, որը ուղղված էր ամբողջական առաջարկի խթանմանը, փրկեց խոշոր ընկերություններին սնանկացումից և տնտեսության փլուզումից, սակայն պահանջարկի ցածր մակարդակի պայմաններում չէր կարող ապահովել տնտեսական աճ: Հետագայում փոքր բիզնեսի վարկավորումն ու սպառողներին տրվող հարկային արտոնություններն անմիջապես տվեցին որոշակի արդյունքներ: ԱՄՆ-ին հետևեցին Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան, Չինաստանը և մի շարք այլ երկրներ: ՀՀ-ում նույնպես 1,5 մլրդ դոլար արտաքին պարտքի առաջին տրանշները ուղղվեցին առաջարկի խթանմանը՝ Զանգեզուրի և Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատներին, փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնին, կառուցապատողներին՝ որպես վարկեր և պետական երաշխիքներ: Ցածր պահանջարկի պայմաններում այսպիսի քաղաքականությունը չէր կարող արդյունավետ լինել:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2-ի տվյալներից, սկսած 2000 թ. սպառման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ տարեց տարի կրճատվել է ընդհուպ մինչև 2008 թ.: Այնուամենայնիվ, սկսած 2009 թ., սպառման տեսակարար կշռի ավելացումը որոշակիորեն նպաստել է պահանջարկի ավելացմանը և կասեցրել է տնտեսական անկումը:

Տնտեսական աճի տեմպերը, ընդհանուր առմամբ, Հայաստանում միջին հաշվով շատ ավելի մեծ են եղել, քան զարգացող և առավել ևս զարգացած երկրներում: 2000թ.-ից ի վեր տնտեսական աճը Հայաստանում մոտ 3 անգամ ավելի արագ է եղել՝ համաշխարհային տնտեսության համեմատ: Հայաստանի աճի տեմպերը բավականին բարձր են նաև հարևան և նմանատիպ երկրների հետ համեմատած՝ զիջելով միայն Ադրբեջանին և Թուրքմենստանին, ինչը պայմանավորվում է այս երկրներում նավթագազային եկամուտների կտրուկ աճով: Աճի և զարգացման նման միտումների շտրիկով Հայաստանը Համաշխարհային բանկի դասակարգման սանդղակում ցածր եկամտով երկրների դասից տեղափոխվեց միջինից ցածր եկամտ ունեցող

երկրների խումբ: Տնտեսական աճի ապահովման առումով կարևոր դեր ունեցան իրականացված առաջին սերնդի բարեփոխումները՝ տնտեսության ազատականացումը և շուկայական ենթակառուցների և ինստիտուտների ձևավորումը:



Գծապատկերը կազմված է հավելված 1-ի տվյալներով

**Գծապատկեր 2**

**Տնտեսական աճի տեմպերը ՀՀ-ում 2000–2012 թթ.**

Հայաստանում տնտեսական աճի հիմնական աղբյուրներից մեկը արտաքին խնայողություններն են, մասնավորապես՝ արտերկրից ստացվող մեծածավալ դրամական փոխանցումները և զարգացման ծրագրերում և ենթակառուցվածքներում ներդրումները: 2004–2008 թվականների ընթացքում միայն բանկային համակարգի միջոցով երկիրը ստացել է ավելի քան 5.3 միլիարդ ԱՄՆ դոլարի դրամական փոխանցումներ: Ըստ փորձագիտական գնահատականների՝ վերջին տարիներին Հայաստանի տնային տնտեսությունները արտերկրից տարեկան ստացել են մոտ 1.5 միլիարդ ԱՄՆ դոլարի մասնավոր դրամական փոխանցումներ: 2012 թ. արձանագրվել է Հայաստանի Հանրապետության պատմության մեջ ոչ առևտրային տրանսֆերտների ամենամեծ հոսքը՝ 1,68 մլրդ դոլար: Դրամական փոխանցումները խթանում են սպառողական շուկան, շինարարությունը և ծառայությունների ոլորտը: Գնողունակ պահանջարկը երկրում աջակցություն է ստանում հիմնականում շնորհիվ ֆիզիկական անձանց անունով ստացվող դրամական մուտքերի:

Զգալի տեմպերով ավելացել է նաև 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն, որը 2000 թվականի 593 ԱՄՆ դոլարի դիմաց 2008 թ. տարբեր տվյալներով դարձավ 3340–3606 ԱՄՆ դոլար: Ճգնաժամից հետո այն կրճատվեց և վերականգնվեց միայն 2012 թ.:

**Ետխորհրդային երկրներում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 1999, 2008 և 2012 թթ.**

Աղյուսակ 3

(ԱՄՆ դոլար)

Երկրներ	1999		2008		2012		Էստոնիայի հնդեքս=100	
	Տեղ	դոլար	տեղ	դոլար	տեղ	Ռոլար	1999	2010
Էստոնիա	1	3880	1	14710	1	16316	100	100
Լիտվա	3	2980	3	11910	2	14150	77	79
Ռուսաստան	4	1760	4	9760	3	14037	45	78
Լատվիա	2	2840	2	12020	4	14009	73	76
Ղազախստան	6	1290	5	6140	5	12007	33	64
Ադրբեջան	12	570	7	3870	6	7228	15	41
Բելառուս	5	1400	6	5430	7	6685	36	35
Թուրքմենստան	10	620	10	3030	8	6511	16	28
Ուկրաինա	8	760	9	3220	9	3867	20	22
Վրաստան	7	780	11	2450	10	3508	20	19
<b>Հայաստան</b>	<b>11</b>	<b>610</b>	<b>8</b>	<b>3340</b>	<b>11</b>	<b>3338</b>	<b>16</b>	<b>18</b>
Մոլդովա	13	400	12	1500	12	2038	10	12
Ուզբեկստան	9	650	13	890	13	1717	17	9
Կիրգիզիա	14	300	14	780	14	1160	8	6
Տաջիկստան	15	180	15	620	15	872	5	5

Աղբյուր՝ World bank, հասանելի է: <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD/countries>.

1990-ականների անկման ֆոնի վրա ուժեղանում էին տարբերությունները ետխորհրդային երկրների միջև: Համապատասխանաբար, տնտեսական տարբեր դինամիկայի պայմաններում տեղի էին ունենում էական փոփոխություններ նշված երկրների տնտեսությունների հարաբերակցության մեջ: 1999 թ. Ռուսաստանի և Հայաստանի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի տարբերությունը 2,9 անգամ էր, Էստոնիան առաջ էր անցել Հայաստանից 6,4 անգամ: 2012 թ. այդպիսի խորը ճեղքվածքը Հայաստանի համար պահպանվել է (աղյուսակ 3): Բնակչության մեկ շնչի հաշվով անվանական ՀՆԱ-ն Հայաստանում 2012 թ եղել է 3338 դոլար, իսկ հաշվի առնելով գնողունակության համարժեքայնությունը ԱՄՆ-ն այն գնահատել է 5178 դոլար:

Աղյուսակ 4

Տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը և սպառումը ՀՀ-ում 2004–2011 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
1. Դրամական եկամուտներ 1 շնչի հաշվով, դրամ	14450	15949	18446	22287	26866	28038	31553	34206	
%-ով նախորդ տարվա նկատ.	-	110,4	115,7	120,8	120,5	104,4	112,5	108,4	
2. Սպառողական ծախսեր, դրամ	19251	21139	23276	26297	28878	27667	28646	32585	
%-ով նախորդ տարվա նկատ.	-	109,8	110,1	113,0	109,8	95,8	103,5	113,8	
3. Ծայրահեղ աղքատության գիծ	12467	13266	14300	15753	17644	17483	19126		
Աղքատության ընդհանուր գիծ	19373	20289	21555	23168	29903	30920	33517		
4. Աղքատների տեսակարար կշիռը, %	41,1	34,4	30,6	28,8	29,2	37,7	38,8		
5. Աղքատության խորությունը, %	7,4	5,4	3,8	4,9	5,1	7,8	8,1		
6. Ջինի գործակից	0,395	0,359	0,369	0,371	0,339	0,355	0,363	0,371	
7. Իրական միջին աշխատավարձ									
%-ով նախորդ տարվա նկատ.	116,7	119,1	116,3	114,1	108	106,2	98,8	97,8	
8. ՀՆԱ աճի տեմպը, %	-	13,9	13,2	13,7	6,9	-14,1	2,2	4,7	7,2
9. Բնակչ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճի տեմպը, %-ով նախ. տարվա նկատմամբ	27,3	36,8	30,1	43,9	26,4	-26,1	6,7	18,2	-2,1

Սակայն, ինչպես վկայում են աղյուսակ 4-ի տվյալները, տնտեսական այդպիսի աճը չի ուղեկցվում բնակչության կենսամակարդակի համապատասխան փոփոխություններով:

**Սպառումը**

2004–2008 թթ. ընթացքում բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն տարեկան միջին հաշվով ավելացել է ավելի քան 30%-ով, իսկ մեկ շնչին ընկնող դրամական եկամուտների և սպառողական ծախսերի աճը ուղեկցվել է ծայրահեղ աղքատ և աղքատ բնակչության տեսակարար կշռի էական նվազմամբ և աղքատության խորության կրճատմամբ: Ինչպես տեսանք, 2001–2007 թվականներին տնտեսությունը գրանցել է տնտեսական աճի բավական

բարձր տեմպեր: Մասնավոր հատվածը արձագանքեց տնտեսության ազատականացման և կառուցվածքային մյուս բարեփոխումներին, սակայն աճի ֆինանսավորման հիմնական աղբյուրն արտաքին խնայողություններն էին: Աճի և զբաղվածության, ինչպես նաև արտաքին մասնավոր և պետական տրանսֆերտների շտրիիվ երկրում զգալիորեն կրճատվեց աղքատության (հատկապես ծայրահեղ աղքատության) մակարդակը՝ 2007 թ. հասնելով 28.8%-ի՝ 1999 թվականի 50%-ի փոխարեն: Այնինչ 2010–2011 թթ., թեև 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալը, սպառողական ծախսերը և դրամական եկամուտները աճել են, սակայն աղքատության ցուցանիշների վրա դրական ազդեցություն չեն թողել:

Ավելին, այդ տարիներին 2008 թ. համեմատ մեծացել է և՛ աղքատների տեսակարար կշիռը, և՛ աղքատության խորությունը և, որ ավելի բացասական է, Ջինի գործակիցը: Եթե 2008 թ. այն 0,339 էր, ապա 2010 թ.՝ 0,371: Ինչպես վկայում են աղյուսակի տվյալները՝ 2004–2008 թթ. իրական միջին աշխատավարձի տարեկան տեմպերը գերազանցել են ՀՆԱ-ի միջին տարեկան տեմպերին, որի արդյունքում Ջինի գործակիցը 0,395-ից նվազել էր 0,339-ի: Այնինչ ետճգնաժամային տարիներին ՀՆԱ աճը չի ուղեկցվել իրական աշխատավարձի աճով, որը և հանգեցրել է աղքատության բնեռացման խորացմանը: Սա կարելի է դիտարկել որպես տնտեսության մեջ նկատվող ամենամանրանկալի միտումներից մեկը: Դա վկայում է, որ ՀՆԱ դրական աճի տեմպերը, որոնք ձեռք են բերվել ետճգնաժամային տարիներին, ուղղվել են բնակչության առավել ապահովվված խավերի եկամուտների ավելացմանը, ուստի և հանգեցրել են ոչ միայն աղքատության ավելացմանը, այլև աղքատ ու հարուստ խավերի միջև եկամուտների տարբերության խորացմանը:

Բնականաբար, այսպիսի քաղաքականությունը վաղ թե ուշ հանգեցնելու է արդյունավետ պահանջարկի առավել կրճատմանը, որը վերածվում է ՀՆԱ աճի տեմպերի կրճատման կարևոր գործոնի: Ո՞րն է այս իրավիճակից դուրս գալու ճանապարհը:

Տնտեսության կայուն զարգացման ապահովման մեխանիզմի մեջ ներքին պահանջարկի խթանումը կարևորելը ենթադրում է հրաժարվել էժան աշխատուժին խարսխված տնտեսությունից և կողմնորոշվել դեպի սոցիալական ուղղվածության զարգացում, որի շրջանակներում հասարակության առաջընթացի գլխավոր ազդակը երկրի բնակչության բարձր կենսամակարդակն է: Սպառողական պահանջարկի ավելացումը ենթադրում է բնակչության դրամական եկամուտների, մասնավորապես՝ աշխատավարձի, հոնորարների, ռենտայի, տրանսֆերտների արագացված աճ: Այստեղ կարևոր է վարձու աշխատողների շահերի օրենսդրական պաշտպանումը, հատկապես՝ նվազագույն աշխատավարձի մակարդակի սահմանումը և լրիվ զբաղվածության ակտիվ քաղաքականության վարումը:



Այսպիսի մոտեցումը արտացոլված է Ջոան Ռոբինսոնի տնտեսական աճի հայտնի նորքեյնսայան մոդելում: Մոդելը հենվում է այն գաղափարին, որ ազգային արդյունքի աճի տեմպերը կախված են ազգային արդյունքի բաշխումից: Մոդելի հավասարումներն են.

$$W1 + W2 = P2 \quad W1 = Q2$$

որտեղ՝  $W1$  – աշխատավարձն է ներդրումային ապրանքների արտադրության ոլորտում (I ստորաբաժանում),  
 $W2$  – աշխատավարձը՝ սպառման առարկաների արտադրության ոլորտում (II ստորաբաժանում),  
 $P2$  – սպառման առարկաների արտադրության ծավալը,  
 $Q2$  – սպառման առարկաների արտադրության ոլորտում մաշվածքն ու շահույթը՝ «քվազիռենտան»:

Այս մոդելում, մի կողմից՝ կուտակման բարձր նորմի ապահովումը դժվարացնում է աշխատավարձի բարձրացումը, սակայն, մյուս կողմից՝ արտադրանքի թողարկման տեմպից աշխատավարձի ետ մնալը նվազեցնում է ապրանքների նկատմամբ պահանջարկը և, ստեղծելով տնտեսական անկման վտանգ, կաշկանդում կապիտալի հետագա կուտակման հնարավորությունները: Նման իրավիճակից խուսափելու ելքը, ըստ մոդելի հեղինակի, արհմիությունների պայքարն է, կախված աշխատանքի արտադրողականության տեմպից: Այս հանգամանքը կարող է ապահովել կապիտալի կուտակման այնպիսի ծավալներ և տնտեսական աճի այնպիսի տեմպեր, որոնք կհամապատասխանեն տեխնիկական առաջընթացի հնարավորություններին:

Աշխարհի զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ ՀՆԱ-ի մեջ աշխատավարձի և սոցիալական ապահովագրության գումարային տեսակարար կշիռը պետք է կազմի 55–65%: Հայաստանում այս ցուցանիշը չի գերազանցում 38–39%-ը: Աշխատանքային եկամուտների այսպիսի ցածր մակարդակը վճռական գործոն է մեր երկրում սպառողական պահանջարկի ցածր մակարդակի ձևավորման համար: Մոդելի քննարկումը ցույց է տալիս, որ ՀՀ-ում աշխատավարձի և շահույթի միջև առկա անհամամասնությունը անհրաժեշտ է վերացնել: Աշխատավարձի տեսակարար կշռի բարձրացմանը կարելի է հասնել, մասնավորապես, նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Վերը նշված թվերը վկայում են, որ ՀՆԱ-ի մեջ աշխատավարձի տեսակարար կշռի միջազգային մակարդակը ապահովելու համար միջին աշխատավարձը ՀՀ-ում պետք է բարձրանա առնվազն 60%-ով: Դրան կարելի է հասնել արմատական փոփոխության ենթարկելով ազգային եկամտի բաշխման համամասնությունները՝ ձեռնարկատիրական եկամտից (մոնոպոլ ոլորտների գերշահույթներով) դեպի աշխատանքի վարձատրություն: Հայտ-

նի է, որ Հայաստանում ստացվող գերշահույթների մի մասը հոսում է դուրս, չձևավորելով ոչ՝ ներքին պահանջարկ և ոչ՝ էլ խնայողություններ: Մյուս կողմից՝ բնակչության գերակշիռ մասի ցածր գնողունակությունը խոչընդոտում է արտադրության հետագա աճը, իսկ որոշ ճյուղերում հանգեցնում է գերարտադրության (շինարարություն): Հետևաբար, խոսքը վերաբերում է ոչ թե ազգային եկամտում սպառման տեսակարար կշռի ավելացմանը, այլ սպառման կառուցվածքի բարելավմանը, ինչը կնպաստի ներքին պահանջարկի ավելացմանը:

Այսպիսով, զարգացման այս փուլում երկրի տնտեսության խթանումը պահանջարկի տեսանկյունից պահանջում է բարձրացնել աշխատանքի վարձատրության բաժինը ՀՆԱ-ում, նվազագույն աշխատավարձի և թոշակների մակարդակը համապատասխանեցնել նվազագույն կենսամակարդակին: Դա նաև թույլ կտա երկրում գործող արտասահմանյան կապիտալով բազմաթիվ ձեռնարկությունների եկամտի ավելի մեծ մասը թողնել երկրում աշխատավարձի ձևով: Մակայն աշխատավարձի բարձրացումը չի կարելի դիտել որպես միանվագ ակտ: Աշխատավարձի շեշտակի աճը կհանգեցնի ֆիրմաների մի մասի սնանկացման, ցածրորակ աշխատուժի դուրս մղման և, շուկայում հավասարակշռվածից բարձր սահմանվելու դեպքում, սպասման գործազրկության: Այդ պատճառով այն պետք է կատարվի աստիճանաբար:

Մոդելը ցույց է տալիս նաև, որ հետագայում արդեն աշխատավարձի բարձրացումը կարող է պայմանավորված լինել միայն նրա արտադրողականության բարձրացմամբ: Մակայն պետք է նկատել, որ աշխատանքի արտադրողականության բարձրացումը ինքնաբերաբար չի ապահովում նաև աշխատավարձի բարձրացում: Դա կատարվում է արհմիութենական պայքարի միջոցով, որը Հայաստանում փաստացի բացակայում է: Դա է նաև վերը նշված անհամամասնության ձևավորման պատճառներից մեկը:

Եթե կառավարությունը չկասեցնի շահույթի աճի դինամիկան, պահելով այն ավելի ցածր մակարդակի վրա, քան ՀՆԱ աճն է, ապա դրանից կտուժեն բոլորը: Բնակչության լայն շերտերի շրջանում ցածր պահանջարկը կհանգեցնի ձեռնարկատիրական եկամուտների, կորուստների, չինովնիկները կգրկվեն իրենց արտոնություններից՝ հարկային մուտքերի կրճատման պատճառով, իսկ շարքային քաղաքացիների դժգոհությունը կսրի սոցիալական վիճակը:

### **Ներդրումները**

Մակրոտնտեսական իրավիճակի գնահատման կարևոր ուղղություններից մեկը, իհարկե, ներդրումային գործընթացի հետազոտումն է: Վերջինս արտացոլվում է ՀՆԱ-ում ներդրումների տեսակարար կշռի կամ կուտակման նորմի ցուցանիշի մեջ: Այն երկրները, որոնք ցանկանում են ապահովել

կայուն տնտեսական աճ ըստ նորամուծական զարգացման մոդելի, պետք է ապահովեն կուտակման այնպիսի նորմ, որը մոտ է խնայողությունների բարձր նորմին, նաև նպաստեն զուտ ներդրումների աճին՝ հատկապես արդյունաբերության բարձր տեխնոլոգիական ճյուղերում: Վերականգնողական աճ ունեցող երկրներում, որոնց թվին է պատկանում նաև Հայաստանը, որոշ ժամանակահատվածում տնտեսական աճ կարող է ապահովվել նաև կուտակման ցածր նորմի պայմաններում՝ ի շնորհիվ թերբեռնված կարողությունների օգտագործման աստիճանի մեծացման: Ընդ որում, վերականգնողական աճի ընթացքում ներդրումների խթանները գալիս են ոչ թե խնայողություններից, այլ սպառողական ծախսերից: Չօգտագործվող արտադրական կարողությունների առկայության դեպքում պետությունը պետք է խթանի հենց սպառողական ծախսերը:

Երկարատև հեռանկարում արտադրության ծավալի ավելացումն անհնարին է առանց ներդրումների մեծացման: Համաշխարհային տնտեսության զարգացման պրակտիկական ցույց է տալիս, որ գոյություն ունի բավական կոշտ ուղղակի կապ տնտեսական աճի և կուտակման նորմի միջև: 1990–2001 թթ. Լատինական ամերիկայի և Աֆրիկայի երկրներում կուտակման 20–21% նորմին համապատասխանում էր տարեկան 2–3% աճը, Հնդկաստանում՝ 25%-ին՝ 6% աճը, Չինաստանում՝ 40%-ին՝ 10% աճը: Հետևաբար, զարգացող երկրներում կուտակման նորմի ավելացման քաղաքականությունը ապահովում է աճի բարձր տեմպեր:

Խնայողությունների աճի խրախուսման քաղաքականությունը ենթադրում է, նախ և առաջ, ազդեցության ուժեղացում այդ խնայողությունների եկամտաբերության վրա: Վերջինս սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինֆլյացիայի տեմպը և հարկերի մակարդակը: Ձեռնտո՞ւ է արդյոք խնայողությունը, թե՞ ոչ. այս երկրնորանքը կարելի է լուծել երկու կերպ՝ ինֆլյացիայի տեմպի համեմատ դեպոզիտների անվանական տոկոսադրույքի բարձրացմամբ, կամ խնայողություններից ստացվող անվանական եկամտի հարկադրման կրճատմամբ: Օրինակ՝ Ճապոնիայում խնայողությունները խթանելու նպատակով դեպոզիտներից ստացվող եկամուտները և արժեթղթերից շահաբաժինները ազատվում են հարկերից:

Ինչպես տեսնում ենք հավելված 1-ի տվյալներից՝ 2000–2008 թթ. կուտակման բաժինը ազգային եկամտում անշեղորեն աճել է 2000 թ. 18,6%-ից հասնելով 40,9%-ի 2008 թ.: Սակայն հետագա տարիներին այն սկսել է նվազել հասնելով 23,9%-ի 2012 թ.: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ճգնաժամի ընթացքում, ձգտելով չկրճատել ամբողջական պահանջարկը, կառավարությունը աշխատում էր պահել անփոփոխ տնային տնտեսությունների և պետական սպառման մակարդակները: Այստեղ կարևոր է մի հանգամանք ևս: Ազգային խնայողությունների մի մասը օգտագործվում է վճա-

րային հաշվեկշռի բացասական մնացորդը ֆինանսավորելու նպատակով: Այս պայմաններում կուտակման մաքուր նորմը հավասար է համախառն նորմի և վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի տարբերությանը: 2012 թ. այն ունեցել է բացասական արժեք, այսինքն, գուտ ներքին խնայողություններ չենք ունեցել:


Հայաստանում կուտակման գլխավոր աղբյուրն արտաքին խնայողություններն են, մասնավորապես՝ արտերկրից ստացվող դրամական փոխանցումները և զարգացման ծրագրերով ու ենթակառուցվածքներում ներդրումները: Միայն բանկային համակարգի միջոցով վերջին տարիներին երկիրը ստացել է ավելի քան 6 մլրդ դոլարի դրամական փոխանցումներ: Ըստ փորձագիտական գնահատականների՝ տարեկան ևս մոտ 1,5 մլրդ դոլլարի մասնավոր դրամական փոխանցումներ ստանում են Հայաստանի տնային տնտեսությունները:

Սակայն, պետք է նկատի ունենալ, որ ներդրումների ծավալների ավելացման համար անհրաժեշտ է երկու կարևոր պայմաններ.

- Խնայողությունների բարձր նորմի ապահովում,
- Խնայողությունների առավելագույնս օգտագործում ներդրումային նախագծերում:

Խնայողությունների նորմի բարձրացումը ներդրումների ավելացման համար միայն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է: Եթե խնայողությունների հավելանք չի ուղեկցվում ներդրումների հավելանքով, ապա անիմաստ են խնայողությունների ավելացման բոլոր ջանքերը: Բազմարկչային էֆեկտի շնորհիվ դրանք կարող են նույնիսկ կրճատել հավասարակշռված ՀՆԱ ծավալը: Տեսականորեն դա կարելի է արտացոլել գծապատկեր 3-ի տեսքով:

Ենթադրենք, տնտեսությունը մեկնարկում է A կետում: Խնայողությունները խթանող քաղաքականության շնորհիվ դրանց ծավալը ավելանում է և խնայողությունների կորը S դիրքից տեղաշարժվում է S<sub>1</sub> դիրք, իսկ ներդրումները մնում են նույն մակարդակի վրա: Դրա հետևանքով սպառողական ծախսերը հարաբերականորեն կրճատվում են, որը բազմարկչային էֆեկտով կրճատում է ամբողջական եկամուտը Y<sub>0</sub>-ից Y<sub>1</sub>: Քանի որ Y եկամուտը կրճատվում է, B կետում խնայողությունների ծավալը մնում է նախկին՝ նույն A կետի մակարդակին: Եթե խնայողությունների աճը ուղեկցվի ներդրումների պլանավորված աճով, և ներդրումների կորը I դիրքից տեղափոխվի I<sub>1</sub> դիրք, ապա թողարկման մակարդակը կմնա Y<sub>0</sub> մակարդակին և արտադրության անկում տեղի չի ունենա: Ավելին, արտադրության կառուցվածքում կմեծանան ներդրումային ապրանքները, որոնք հետագայում նպաստավոր պայմաններ կստեղծեն տնտեսական աճի համար:



**Պծապարկեր 3**

**Խնայողության նորմի փոփոխության ազդեցությունը եկամտի վրա**

Հետևաբար, պետական քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը այնպիսի մեխանիզմների ստեղծումն է, որոնք կնպաստեն խնայողությունների վերածմանը ներդրումների:

Խնայողությունների մի մասը կենտրոնացվում է առևտրային բանկերում, որոնք էլ վարկավորում են ներդրումները: Առևտրային բանկերի վարկային ներդրումները վերջին տարիներին անշեղորեն աճում են: Աղյուսակ 5-ի տվյալները ցույց են տալիս, որ դրա վրա չի ազդել նույնիսկ տնտեսական ճգնաժամը: 2000–2011 թթ. ընթացքում վարկավորման ծավալները ոչ միայն ավելի քան տասնապատկվել են՝ ամեն տարի գրանցելով նախորդ տարվա համեմատ զգալի աճ, այլև 2003 թ. մեծացել է նաև նրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ: 2011 թ. այն եղել է 33,1%, 2003 թ. 6,1%-ի փոխարեն: Ընդ որում, հատկանշական է, որ այդ նույն 2003 թ. սկսած վարկավորման ընդհանուր ծավալներում ավելանում է երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռը՝ հասնելով բոլոր վարկերի մոտ 80%-ին: Իհարկե, վերջին տարիներին այդ աճի ավելի մեծ բաժինը ձեռք է բերվել սպառողական վարկերի առաջանցիկ տեմպերով աճի շնորհիվ, սակայն ներդրումներին ուղղվող վարկերը նույնպես տարեցտարի աճում են:

Ազգային խնայողությունների վրա ազդելու մյուս ուղղությունը ուղղակի ճանապարհով պետական խնայողությունների փոփոխությունն է: Քանի որ ՀՀ պետական բյուջեն պլանավորվում է մշտական պակասուրդով, ապա, մեծ հաշվով, պետական խնայողությունները բացակայում են: Հավելված 1-ի տվյալները վկայում այդ մասին: Բյուջետային ծախսերի ավելացումը, իհարկե, խթանում է ամբողջական պահանջարկը: Սակայն դա կարող է կայունացնող ազդեցություն ունենալ միայն կարճ ժամկետում, տնտեսական

ցնցումների ժամանակ: Այնինչ երկար ժամկետում պակասուրդը կրճատում է խնայողությունները, արտանդում ներդրումները և բացասական ազդեցություն է թողնում ՀՆԱ ծավալի աճի վրա: Վերջին հաշվով, պակասուրդի կրճատումը նշանակում է ազգային խնայողությունների աճ և ներդրումների ավելացման հնարավորությունների մեծացում:

Աղյուսակ 5

ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները  
(մլն դր, տարեվերջի դրությամբ)

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Ընդամենը, մլն դր., տարեվերջին այդ թվում՝	96972	87700	83667	100757	137134	191209	237325	422315	628694	724851	891850	1250404	-
երկարաժամկետ վարկեր, մլն դր.	57429	45962	37215	44589	69566	113807	149875	296911	477050	557914	715837	964355	-
ընդհանուրից %	59,2	52,4	44,5	44,3	50,7	59,5	63,2	70,3	75,9	77,0	80,3	77,1	-
կարճաժամկետ վարկեր, մլն. դր.	39543	41738	46452	56168	67567	77402	87450	125404	151643	166936	176013	286049	-
ընդհանուրից %	40,8	47,6	55,5	55,7	49,3	40,5	36,8	29,7	24,1	23,0	19,7	22,9	-
Վարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	9,4	7,5	6,1	6,1	7,2	8,5	8,9	13,4	17,6	23,1	25,7	33,1	-

Ավժ տարեգիրք 2003, 2008, 2012 թթ.

Այնուամենայնիվ, նույնիսկ պետական խնայողությունների բացակայության պայմաններում պետական ծախսերի կազմում իրականացվում են ներդրումային ծրագրեր: Աղյուսակի տվյալներից երևում է, որ 2000–2012 թթ. պետական ներդրումների տեսակարար կշիռը ծախսերի կառուցվածքում տատանվել է 12–34%, ճգնաժամից հետո կայունանալով 14%-ի սահմաններում:

Ինչպես տեսանք, սկսած 2001 թվականից ներքին տնտեսությունում համախառն խնայողությունները ՀՆԱ-ի նկատմամբ դրսևորել են աճի միտում մինչև 2008 թ., սակայն վերջին տարիներին դրանք կրճատվել են հասնելով ՀՆԱ-ի մոտ 24%-ին: Քանի որ դրանց մեծ մասը օգտագործվում է վճարային հաշվեկշռի բացասական մնացորդը փակելու համար, դրանք չեն կա-

րող բավարարել իրականացվող թե՛ մասնավոր և թե՛ պետական ներդրումները ֆինանսավորելու համար:

Ահա թե ինչու շատ տնտեսագետներ և քաղաքական գործիչներ տնտեսական զարգացման մեջ մեծ տեղ են հատկացնում օտարերկրյա ներդրումներին: Իհարկե, տնտեսության զարգացումն ապահովելու մեջ օտարերկրյա ներդրումները կարող են էական դեր կատարել: Խոսքը ուղղակի օտարերկրյա ներդրումների մասին է, որոնք իրենց հետ բերում են բարձր տեխնոլոգիական սարքավորումներ, արդյունավետ կառավարում, նպաստում են նոր աշխատատեղերի ստեղծմանը, ավելացնում հարկային եկամուտները: Օտարերկրյա ուղղակի ներդրումների հարաբերական ծավալները Հայաստանում բավական փոքր են: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալների օտարերկրյա ուղղակի ներդրումները Հայաստանում 2012 թ. վերջին եղել են 7,9 մլրդ դոլլար, որը միջին հաշվով տարեկան ՀՆԱ-ի 6%-ն է: Ընդ որում, 2012 թ. տնտեսության իրական հատվածում ուղղակի ներդրումներ են կատարվել միայն Ֆրանսիայի, Ռուսաստանի դաշնության և Կանադայի կողմից 567,4 մլն դոլարի ծավալով, որը նախորդ տարվա համեմատ պակաս էր 10,1%-ով:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 6-ից, և՛ ուղղակի, և՛ համախառն օտարերկրյա ներդրումների ծավալները վերջին տարիներին որոշակի կայուն միտումներ չեն դրսևորում:

Եթե ուղղակի ներդրումների ծավալը 2008 թ. ամենաբարձրն էր, ապա հաջորդ տարիներին էականորեն կրճատվեց, որոշ չափով ավելանալով 2011 թ. և ինչպես նշեցինք, նորից կրճատվեց 2012 թ.:

**Աղյուսակ 6**

**Օտարերկրյա ուղղակի և համախառն ներդրումների հոսքերը ՀՀ-ում (մլն դոլլար)**

	2007	2008	2009	2010	2011
1 Ընդամենը ուղղակի ներդրումների հոսքերը	675,3	1118,4	828,7	535,7	702,1
%-ով նախորդ տարվա նկատմամբ	100,0	165,6	74,1	64,6	131,1
2 Ընդամենը համախառն ներդրումային հոսքեր	1546,7	2132,3	2710,3	2073,3	3146,2
%-ով նախորդ տարվա նկատմամբ	100,0	137,9	127,1	76,5	151,7
3 Ուղղակի ներդրումների տեսակարար կշիռը համախառն ներդրումների մեջ, %	43,6	52,4	30,6	25,8	22,3

ԱՎԾ գրաբեկիրք, 2012 թ.

Նման անկայուն վիճակ է նաև համախառն ներդրումների առումով: Համախառն ներդրումների ծավալների վրա մեծ ազդեցություն են թողնում միջազգային կազմակերպությունների տրամադրած մեծածավալ վարկերը, որոնք ավելացնում են պետական պարտքը: Սակայն մի օրինաչափություն, այնուամենայնիվ, դիտարկվում է: Քննարկվող ժամանակահատվածում ուղղակի ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ տարեցտարի կրճատվում է և 2007 թ. 43,6%-ից այն իջել է 22,3% 2011 թ.: Սա մենք գնահատում ենք որպես խիստ բացասական միտում:

Հայաստանի ներդրումային դիրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուղղակի ներդրումների մասնաբաժնի կրճատման հետ միաժամանակ չի կարելի լիովին հիմնավոր համարել նաև դրանց օգտագործման ուղղությունները: Այսպես, 2011 թ. վերջին Հայաստանի ներդրումային դիրքը ուղղակի ներդրումների գծով, կամ օտարերկրյա ներդրումներով ձևավորված պաշարները եղել են 4727,3 մլն դոլար, որից 4245,0 մլն դոլարը, կամ 88,0%-ը՝ մասնավոր ներդրումները: Նույն ժամանակաշրջանում ներդրումային դիրքը համախառն ներդրումների գծով եղել է 10241,5 մլն դոլար: Համախառն այս ներդրումների միայն 46%-ն է կատարվել իրական հատվածում: Թվարկենք այն ճյուղերը, որտեղ կատարվել են ամենախոշոր ներդրումները (մլն դոլար).

- գյուղատնտեսություն ..... 38,5
- մետաղների արդյունահանում ..... 11,3
- այլ օգտակար հանածոների արդյունահանում..... 219,4
- խմիչքների արտադրություն..... 233,7
- մետաղների արտադրություն..... 376,4
- համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական, էլեկտրոնային սարքավորումների արտադրություն ..... 104,8
- էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու արտադրություն ..... 1422,1
- վերգետնյա և խողովակաշարային տրնսպորտ..... 243,0
- օդային տրանսպորտ ..... 166,2
- կապ ..... 1303,3
- ֆինանսական միջնորդություն ..... 1379,4
- անշարժ գույքի գործարքներ..... 236,7
- գիտական հետազոտություններ ..... 232,6

Ինչպես տեսնում ենք, ներդրումները կատարվում են այնպիսի ոլորտներում, որոնք ունեն կա՛մ հումքային ուղղություն, կա՛մ ենթակառուցվածքային են: Տարօրինակ է, որ կառավարության գերակա հայտարարած ճյուղերում ընդհանրապես օտարերկրյա ներդրումներ չկան կամ էլ դրանք չնչին են: Գերակա ճյուղ համարվող բարձր տեխնոլոգիաների ոլորտում կամ գյուղատնտեսության մեջ ավելի քիչ ներդրումներ են կատարվում, քան անշարժ



գույքի գործարքներում, առևտրի և ծառայությունների ոլորտում, խորհրդատվական զանազան ծառայությունների մեջ:

Անհրաժեշտ է նշել, որ այս հարցում ինչպես տնտեսագետների, այնպես էլ տարբեր երկրների մտտեցումները միասնական չեն: Նույնիսկ կուտակման այնպիսի բարձր նորմ ունեցող երկիր, ինչպիսին Չինաստանն է, խրախուսում է «խելոք փողերի»՝ որպես ուղղակի ներդրումների ներհոսք: Ճապոնիան և Կորեան, որտեղ ևս կուտակման նորմը ավանդաբար բարձր է, իսկ ներդրումային դաշտը խիստ գրավիչ, չեն խրախուսում օտարերկրյա ներդրումները, որոնց տեսակարար կշիռը չի գերազանցում ընդհանուր ներդրումների 1%-ը: Ռուսաստանը, ընդհակառակը, ձգտում է դրսից ներգրավել ժամանակակից տեխնոլոգիաներով իրական ներդրումներ, սակայն զարգացման որոշակի հստակ մոդելի բացակայությունը, օրենսդրական դաշտի անկատարությունը, երաշխիքների բացակայությունը, զարգացած երկրների կողմից նրան որպես ռազմական հակառակորդ ընկալելը դժվարացնում են այդ խնդրի լուծումը:

Կարծում ենք, որ չպետք է գերազնահատել օտարերկրյա ուղղակի ներդրումների դերը, որի հզոր ներհոսքը կարող է տնտեսությանը դատապարտել էքստենսիվ տնտեսական աճի և ռեսուրսների արտահոսքի: Օտարերկրյա ներդրողները իրենց արտահանման ծավալները մեծացնելու նպատակով կարող են ներմուծել բնավ ոչ ամենաարդիական, բայց և թանկարժեք սարքավորումներ, ինչը վատթարացնում է առևտրային հաշվեկշիռը, ավելացնում արտաքին պարտքը: Համաշխարհային փորձը վերհանել է արտասահմանյան ներդրումներին առնչվող մի շարք այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են ընդունող երկրում բնապահպանական հիմնահարցերի անտեսումը, աշխատանքային պայմանների և անվտանգության բնագավառում միջոցների տնտեսումը, ազգային կապիտալի և տնտեսության կարևոր ոլորտների վրա պետության հսկողության կորուստը, երկրից շահույթների և կապիտալի զանգվածային արտահոսքը: Շատ երկրներում միջազգային կորպորացիաները սերտ համագործակցության մեջ մտնելով տեղական քաղաքական վերնախավի հետ, վաղ թե ուշ սկսում են վերահսկել ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական վիճակը երկրում՝ փաստացի գրկելով կառավարությանը ձևավորելու ինքնուրույն տնտեսական քաղաքականություն: Եթե, օրինակ, Արգենտինայում, Մեքսիկայում, Բրազիլիայում պետական մարմինների պասիվությունը և հասարակական վերահսկողության բացակայությունը չեն նպաստում երկրի արագ զարգացմանը, ապա Չինաստանում, Հարավային Կորեայում, Մալազիայում և մի շարք ասիական երկրներում կոշտ քաղաքական ռեժիմների պահպանումը իշխանություններին հնարավորություն է տալիս վարչական և տնտեսական լծակների միջոցով ներդրումներն ուղղել զարգացման ներքին գերակայություններն ապահովող ոլորտներ:

Էլ ավելի վտանգավոր են օտարերկրյա ֆինանսական ներդրումները: Ֆինանսական այն ներդրումները, որոնք ապահովված են միայն կարճաժամկետ սպեկուլյատիվ կապիտալով, վտանգավոր երկրի տնտեսական անվտանգության տեսակետից, քանի որ ամեն մի պահի կարող են «փախչել» երկրից դեպի կապիտալի ավելի շահավետ ոլորտներ: Ֆինանսական ներդրումների այդպիսի արտահոսքեր տեղի են ունեցել 1990-ական թվականներին Մեքսիկայում և Վենեսուելայում, 2001 թ. Արգենտինայում, 2008 թ. Ռուսաստանում:

Ֆինանսական ներդրումների անվերահսկելի ներհոսք կարող է դառնալ վտանգավոր նաև Հայաստանի համար: Խոշոր ընկերությունների արժեթղթերի փոխանցումը արտասահմանյան ընկերություններին դարձնում է դրանց գործունեությունը անվերահսկելի, իսկ ֆինանսական ներքին կայունությունը կախման մեջ գցում համաշխարհային տնտեսական իրավիճակի տատանումներից: Կարծում ենք, որ Հայաստանին անհրաժեշտ է, առաջին հերթին, ներգրավել այն ուղղակի ներդրումները, որոնք ուղղվելու են գերակա հայտարարված ճյուղերի զարգացմանը և ուղեկցվում են տեխնոլոգիական նորամուծություններով: Ֆինանսական ներդրումները, այդ թվում՝ նաև պետական պարտքի ավելացման ձևով հարկավոր է իրականացնել միայն ծայրահեղ անհրաժեշտության պարագայում: Ամեն դեպքում օտարերկրյա ներդրումները պետք է դիտարկել միայն որպես լրացուցիչ, օժանդակ բաղադրիչ, որը կարող է նպաստել երկրի արտադրական ներուժի ամրապնդմանը:

Ներդրումային գործունեության առաջատարը տնտեսության մեջ մասնավոր ձեռնարկություններն են, որոնց բաժին է ընկնում ներդրումային ռեսուրսների 70–80%-ը: Նրանց ներդրումային գործունեության բազմակողմանի խթանումը պետք է դառնա պետության քաղաքականության առաջատար ուղղությունը:


Տեսականորեն՝ ներդրումների վրա, առաջին հերթին, մեծ ազդեցություն է թողնում տոկոսադրույքը: Սակայն Հայաստանի նման փոքր բաց տնտեսության համար դա էական նշանակություն չունի: Տոկոսադրույքի փոփոխությունը կարող է ազդել միայն ներդրումների կառուցվածքի, բայց ոչ ծավալների վրա: Բարձր տոկոսադրույքը ներգրավում է արտասահմանյան կապիտալը, և ներդրումները խթանելու նպատակով այն իջեցնելու դեպքում այդ հոսքը կարող է կրճատվել: Բացի դրանից, ինչպես արդեն պարզել ենք, Հայաստանում բանկային համակարգի կապիտալացումը բավական ցածր է (աղյուսակ 6): Թեպետ վերջին տարիներին վարկավորման ծավալներն ավելացել են, այնուհանդերձ, դրանց ծավալները դեռևս շոշափելի չեն: Այդպիսի պայմաններում դրամավարկային քաղաքականությունը ներդրումների խթանման և դրա միջոցով տնտեսության զարգացման վրա մեծ ազդեցություն չի կարող ունենալ: Դրանից բացի, տոկոսադրույքի իջեցումը կարող է

հանգեցնել խնայողությունների կրճատման և վարկային ռեսուրսների նվազման: Այդ պատճառով անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել ոչ թե տոկոսադրույքի կրճատման, այլ խնայողությունները դեպի իրական հատված ուղղելու վրա: Ներդրումների դուրս մղման էֆեկտը չեզոքացնելու նպատակով պետք է խուսափել պետական բյուջեի հիմքի վրա ֆինանսական բուրգեր կառուցելուց, երբ, բարձր եկամտաբերություն սահմանելով պետական փոխառությունների վրա, ապահովում են մասնավոր անձանց խնայողությունների արտահոսքը ֆոնդային շուկայից և բանկային համակարգից:

Ներդրումային հոսքերի համար կարևոր խթան են ազատական օրենսդրությունը, ճկուն հարկային համակարգը, ինչպես նաև որակյալ աշխատուժը: Ներդրումների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն, որը ամրագրված է «Օտարերկյա ներդրումների մասին» օրենքում, ընդունված 1994 թ., Ներդրումային քաղաքականության մասին Հայեցակարգում՝ հաստատված 2005 թ., և տնտեսական միջավայրը կարգավորող մի շարք այլ օրենսդրական ակտերում: Հայաստանը ներդրումային ռիսկերի ապահովագրման միջազգային կազմակերպության անդամ (MIGA) է, պետության և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի լուծման Կոնվենցիայի ստորագրող կողմ և ներդրումային վեճերի կարգավորման Միջազգային կենտրոնի անդամ: Այս բոլորը պետք է լրացուցիչ վստահություն ներշնչեն արտասահմանյան ներդրողներին:

Ներդրումների խթանման բնագավառում պետական քաղաքականության առավել կարևոր և գործուն ուղղություններից են հարկաբյուջետային միջոցառումները: Արագացված ամորտիզացիայի քաղաքականությունը ամորտիզացիոն մասհանումների ինդեքսավորման և այդ միջոցների պարտադիր նպատակային օգտագործման ապահովմամբ (միայն ներդրումների համար) շահագրգռում է ձեռնարկություններին ավելացնելու ներդրումները, քանի որ նպաստում է ուղղակի հարկերի կրճատմանը:

Այդ շահագրգռվածությունը ավելի է մեծանում, երբ հարկումից ազատվում է շահույթի այն մասը, որը ուղղվում է ներդրումներին կամ գույքահարկից ժամանակավոր (2–3 տարի) ազատվում են նոր ձեռք բերվող մեքենաները և սարքավորումները: Կարգավորման այս լծակները պետք է օգտագործվեն միաժամանակ: Ներդրումային արտոնությունները ավելի արդյունավետ են բարձր շահութաբերություն ունեցող խոշոր ընկերությունների համար, իսկ արագացված ամորտիզացիայի և գույքահարկի արտոնություններից հաճախ օգտվում են մանր ու միջին ձեռնարկությունները, որոնց համար մեկ հաստոցի ձեռք բերումն էլ կարևոր ներդրում է:



Գծապատկերը կազմվել է Հավելված 1-ի տվյալներով

**Գծապատկեր 4**

**Պետական բյուջեի, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդները և համախառն խնայողությունները ՀՀ-ում (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)**

Գծապատկեր 4-ից երևում է, որ 2000 և 2012 թթ. ներքին խնայողությունները չեն բավարարել ներդրումներ իրականացնելու համար:

Մինչև 2007 թ. չնայած ընթացիկ հաշվի պակասուրդի հարաբերական մեծացմամբ հանդերձ՝ զուտ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը անընդհատ աճել է շնորհիվ ՀՆԱ-ի նկատմամբ խնայողությունների առաջանցիկ տեմպերով աճի: Սակայն 2007 թ.-ից ներմուծման ծավալների կտրուկ ավելացումը և արտահանման տեմպերի նվազումը կրճատեցին զուտ ներդրումների հնարավորությունները:

2012 թ. ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումային հոսքերը, ներառյալ պետական կառավարման մարմինների և բանկային ոլորտի միջոցով ներդրումները, եղել են 1587,0 մլն դոլար, կրճատվելով 2011 թ. համեմատ 8,6%-ով: Ընդ որում, էլ ավելի մեծ չափով են կրճատվել ուղղակի ներդրումները՝ 27,5%: Առանց պետական մարմինների և բանկային համակարգի միջոցով ստացված միջոցների օտարերկրյա ներդրումները 751,8 մլն դոլար են, կրճատվելով 2011 թ. համեմատ 7,9%-ով: Դրանից միայն 567,4 մլն է եղել ուղղակի ներդրումներ, որը կրճատվել է 10,1%-ով: 2012 թ. ամենախոշոր ուղղակի ներդրումները կատարել է Ֆրանսիան՝ 230,4 մլն դոլար:

Ըստ երկրների օտարերկրյա ներդրումային հոսքերը ՀՀ տնտեսության մեջ, (մլն դոլլար)

Երկրներ	2011 թ.		2012 թ.		2012 թ. 2011 թ. նկատմամբ, %	
	Ընդամենը	Այդ թվում՝ ուղղակի ներդրումներ	Ընդամենը	Այդ թվում՝ ուղղակի ներդրումներ	Ընդամենը	Այդ թվում՝ ուղղակի ներդրումներ
<b>Ընդամենը</b>	<b>816,2</b>	<b>631,4</b>	<b>751,8</b>	<b>567,4</b>	<b>92,1</b>	<b>89,9</b>
Այդ թվում						
Ռուսաստան	393,8	338,1	122,7	88,2	31,2	26,1
Ֆրանսիա	100,4	100,4	230,4	230,4	2,3անգ.	2,3անգ.
ԱՄՆ	43,8	23,2	14,6	3,7	33,4	16,1
Մեծ Բրիտանիա	33,6	9,9	8,9	0,1	26,5	1,4
Կանադա	31,7	-	106,6	-	3,4 անգ.	-
Գերմանիա	24,5	24,1	48,1	48,1	195,7	2,0 անգ.
Վերջինյան կղզ.	20,3	13,3	0,4	0,3	2,0	2,2
Արգենտինա	19,4	8,7	54,5	51,3	2,8 անգ.	5,8 անգ.
Շվեյցարիա	18,6	7,9	44,6	43,7	2,4 անգ.	5,5 անգ.
Կիպրոս	17,6	16,3	6,6	5,2	37,8	32,2
Այլ երկրներ	132,8	89,5	114,4	96,4	86,1	107,7

Ըստ առանձին երկրների ներդրումային հոսքերը և դրանց փոփոխությունները երևում են աղյուսակ 7-ի տվյալներից: Ինչպես տեսնում ենք, թեև առանձին երկրներ մի քանի անգամ նախորդ տարվա համեմատ ավելացրել են ներդրումների ծավալները (Ֆրանսիա, Կանադա, Գերմանիա, Արգենտինա, Շվեյցարիա), այնուամենայնիվ դա բավարար չի եղել նախորդ տարվա մակարդակին հասնելու համար:

Ներդրումային քաղաքականությունը ՀՀ Կառավարության ընդհանուր տնտեսական քաղաքականության բաղկացուցիչն է, դիտարկվում է որպես տնտեսական զարգացման կարևոր միջոց: 1988–2012 թթ. ժամանակահատվածում Հայաստանի տնտեսությանն է ուղղվել 7,58 մլրդ դոլար օտարերկրյա

ներդրումներ, որոնցից 5,54 մլրդ՝ ուղղակի ներդրումները: Ամենախոշոր ներդրումները կատարել են Ռուսաստանի Դաշնությունը (41,5%), Ֆրանսիան (12,1%), Հունաստանը, Գերմանիան, ԱՄՆ, Լիբանանը, Արգենտինան և Կանադան (4–6 ական %):

Տնտեսական ազատությունների ինդեքսով («Doing Business») Հայաստանը ԱՊՀ երկրներում առաջատարն է ըստ ներդրումային կլիմայի և բիզնեսի բացության աստիճանի: 2013 թ. Հայաստանը 18 կետով բարձրացավ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի Doing Business ռեյտինգում, 50-րդ տեղից առաջանալով 32-րդ տեղը: Ետխորհրդային երկրներից առաջատարը Վրաստանն է (9 տեղ), ապա գալիս են Էստոնիան (21 տեղ), Լատվիան (25 տեղ), Լիտվան (27 տեղ), Ղազախստանը (49 տեղ), Բելառուսը (58 տեղ), Ադրբեջանը (67 տեղ), Կիրգիզիան (70 տեղ), Մոլդովան (83 տեղ), Ռուսաստանը (112 տեղ), Ուկրաինան (137 տեղ), Տաջիկստանը (141 տեղ) և Ուզբեկստանը (154 տեղ):

## ՀՀ Պետական բյուջեն և արտաքին պարտքը


### *Պետական բյուջե*

2000–2012 թթ. ընթացքում Հայաստանի պետական բյուջեն մշտապես փակվել է պակասուրդով: Այդ ժամանակամիջոցում բյուջեի եկամտային մասը ավելացել է ավելի քան 5,5, ծախսերը՝ 4,5 անգամ: Այս ցուցանիշները գերազանցում են ՀՆԱ աճին, ինչը նշանակում է, որ մեծանում է պետական բյուջեի նշանակությունը սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման բնագավառում: Դրա մասին են վկայում նաև բյուջեի պակասուրդի տատանումները: Նվազագույն պակասուրդի մակարդակը գրանցվել է 2003 թ. (20,7 մլրդ դրամ), առավելագույնը 2009 թ. ճգնաժամային տարում (239,1 մլրդ դրամ): Այսինքն՝ պետական բյուջեն ակտիվորեն օգտագործվել է հակաճգնաժամային միջոցառումների համալիրում:

2012 թ. գրանցվել է պետական բյուջեի եկամտային մասի անվանական աճ՝ 7,4%, ծախսային մասի անվանական աճ՝ 2%: Առանց արտաբյուջետային միջոցների պետական բյուջեի եկամուտները եղել են 946,2 մլրդ դրամ, ծախսերը՝ 1006,1 մլրդ դրամ: Այդ նույն թվականին բյուջեի պակասուրդը եղել է 59,9 մլրդ դրամ, որը ՀՆԱ-ի 1,5%-ն է: Նախորդ տարի այն 2,8% էր: Պակասուրդի այսպիսի կրճատումը հնարավորություն տվեց խուսափել պետական պարտքի կտրուկ ավելացումից:

2012 թ. ՀՀ պետական բյուջեի եկամտային մասը ապահովվել է հարկային մուտքերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների և պետական տուրքերի շտրիկով: Ընդ որում, հարկերը, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները եղել են բյուջեի ընդհանուր եկամուտների 92,8%-ը: Իսկ հարկային մուտքերի մեջ 42,0%-ը բաժին

է ընկնում ավելացված արժեքի հարկին: Անհրաժեշտ է նշել, որ բյուջեի եկամուտներ կառուցվածքում նկատվում են դրական տեղաշարժեր: Եթե օրինակ, 2000 թ. անուղղակի հարկերի տեսակարար կշիռը հարկային մուտքերի ընդհանուր գումարում գերազանցում էր 60,0%-ը, ապա 2012թ. եղել է ընդամենը 47,7%: Սակայն, մյուս կողմից, հարկային մուտքերի կառուցվածքում չի ավելանում այնպիսի ուղղակի հարկերի տեսակարար կշիռը, ինչպիսիք են շահութահարկը և եկամտահարկը:



**Գծապատկեր 5**


**ՀՀ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը (մլրդ դրամ)**

2013 թ. կառավարությունը հաստատել է 2014 – 2016 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, որտեղ նախատեսվում են ինչպես ՀՆԱ-ի, այնպես էլ պետական բյուջեի եկամուտների ու ծախսերի աճ: Ծրագրի համապատասխան երեք տարիներին նախատեսվում է ՀՆԱ-ի 6,3%, 6,3%, 6,4% համապատասխան աճ: Բյուջեի եկամուտները նախատեսվում են 1,146 տրլն, 1,266 տրլն, և 1,416 տրլն դրամի չափով: Նախատեսվում է պակասուրդի աստիճանական կրճատում:

**Արդարին պարտք**

2012 թ. տարեկերջի դրությամբ Հայաստանի պետական պարտքը 1763,4 մլրդ դրամ էր կամ 4369,2 մլն դոլար: Դրա մեջ արտաքին պարտքը 3738,2 մլն դոլար էր, որից 594,6 մլն՝ ԿԲ, իսկ 3143,7 մլն դոլարը՝ ՀՀ Կառավարության պարտավորությունները: Ինչպես երևում է գծապատկեր 6-ի

տվյալներից, վերջին 12 տարիների ընթացքում պետական պարտքի ծավալները ավելացել են 4,8 անգամ: Միայն 2012 թ. նախորդ տարվա համեմատ պարտքի գումարը ավելացել է 240,5 մլն դոլարով կամ 5,8%-ով: Սակայն պետական պարտքի մեծության բացարձակ ծավալները դեռևս ոչինչ չեն ասում, եթե չեն համեմատվում ՀՆԱ ծավալների հետ: Եթե դիտարկենք արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցության դինամիկան 2000–2012 թթ., ապա պարտքի բեռի մեծացման միտումը վերջին տարիներին դառնում է ակնհայտ: 2000 թ. 44,9% հարաբերակցությունը հաջողվել էր 2008 թ. հասցնել 13,5%-ի: Սակայն ճգնաժամից հետո բյուջեի պակասուրդի կտրուկ ավելացումը հանգեցրեց այս հարաբերակցության վատթարացմանը, որը 2012 թ. եղավ 37,7%:



**Գծապատկեր 6**


**ՀՀ պետական պարտքի դինամիկան 2000–2012թթ. (մլրդ դրամ)**

Խոշոր վարկային միջոցներ են տրամադրել Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը և Ասիական բանկը (գծապատկեր 7):

Ինչպես արդեն նշել ենք, ըստ Համաշխարհային բանկի դասակարգման Հայաստանը համարվում է միջին եկամտով երկիր, ինչի արդյունքում Համաշխարհային բանկի կողմից Հայաստանին արտոնյալ պայմաններով տրամադրվող վարկերն արդեն փոխարինվում են ոչ արտոնյալ պայմաններով տրամադրվող վարկերի: Ներկայումս Հայաստանը դեռևս հնարավորություն ունի վարկեր վերցնելու IDA-ից, ինչպես նաև Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (IBRD), սակայն 2006 թվականից ստաց-



ված վարկերի մի մասն ունի արտոնյալության ավելի ցածր աստիճան: Դրանց մարման ժամկետներն ավելի կարճ են, այդ վարկերի չստացված մասերի դիմաց իրականացվում են վճարումներ, այն դեպքում, երբ նախկին վարկերի չստացված գումարների դիմաց գանձումներ չէին կատարվում: Հետևաբար, արտաքին պետական պարտքի կառավարման տեսանկյունից կարևոր է ներգրավված պետական նոր պարտքերի տեղաբաշխման արդյունավետության բարձրացման հարցը: Շուկայական տոկոսադրույքով վարկերի ներգրավման դեպքում որպես այլընտրանքային աղբյուր կարող են լինել միջազգային ֆինանսական շուկաներից ներգրավված փոխառությունները: Դրանց հասանելիության ապահովումը մեծ չափով կախված է նաև արտաքին կայունության ցուցանիշներից, որոնց վրա ներդրողները հենվում են որոշումներ կայացնելիս:



Գծապատկեր 7

ՀՀ պետական պարտքի դինամիկան 2000 – 2012 թթ. (մլրդ դրամ)

Արտաքին պարտքի կառավարման կարևոր բաղկացուցիչն է ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները: ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի սպասարկման վարչության հաշվետվության ռիսկերի վերլուծության տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ պետական պարտքը մնում է կառավարելիության սահմաններում:

## Արտաքին տնտեսական գործունեություն

Նկատի ունենալով, որ ներքին խնայողությունների ձևավորման, բյուջեի պակասուրդի և պետական պարտքի կրճատման համար վճռական նշանակություն ունի տնտեսության արտաքին հատվածը, ավելի մանրամասն քննարկենք ՀՀ արտաքին տնտեսական կապերը և վճարային հաշվեկշռում կատարվող փոփոխությունները, նրա բարելավման այն հնարավորությունները, որոնք էական նշանակություն կունենան տնտեսության հետագա աճի համար:

Բաց տնտեսության մեջ, ինչպիսին Հայաստանն է, ազգային արտադրողների արտադրության ծավալների ավելացումը հնարավոր է, եթե նրանք կարողանան մրցակցել արտասահմանյան արտադրողների հետ: Դրա համար անհրաժեշտ է օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաներ, սարքավորումներ ու նյութեր: Դեպի երկիր տեխնոլոգիաների ներթափանցման խողովակներն են ներքին շուկայում արտասահմանյան ապրանքների հետ մրցակցությունը և, ինչպես արդեն նշել ենք, տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների ներհոսը: Տեխնոլոգիաների կատարելագործման խթանման լրացուցիչ միջոց է արտահանման աճը: Հետևաբար, տնտեսության արդիականացումը սերտորեն առնչվում է արտաքին առևտրի վիճակին:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մակրոտնտեսական ցուցանիշների հարաբերական կայունությամբ հանդերձ՝ Համաշխարհային բանկի գնահատականներով Հայաստանի տնտեսության կախվածությունը դեռևս բարձր է արտաքին գործոններից, ինչը բացատրվում է ոչ միայն բարձր արտաքին պարտքով, այլև արտահանման ցածր եկամուտներով: Վրաստանով տարանցիկ փոխադրումների ընդհատումները և տրանսպորտային բարձր ծախսերը հանգեցնում են անբարենպաստ տնտեսական և ֆինակալ արդյունքների: Ռուսաստանի տնտեսության աճացման երևույթները կարող են հանգեցնել վառելիքի և սննդամթերքի գների բարձրացման, դրամական փոխանցումների կրճատման, հետևաբար և պետության եկամուտների կրճատման ու բյուջեի պակասուրդի ավելացմանը:

## Հարևան երկրների հետ համագործակցությունը

2008 թ. ճգնաժամը մերկացրեց Հայաստանի աշխարհատնտեսական անբարեհաջող դիրքը, ինչը հետևանք է տրանսպորտային սահմանափակումների և միջազգային տրանսպորտային փակուղային վիճակի: Դա ստիպեց ակտիվացնել ջանքերը հարևան երկրների հետ հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ:

**Վրաստան:** Դեպի արտաքին աշխարհի Հայաստանի հիմնական դարպասը Վրաստանն է: Հայաստանին հաջողվեց պահպանել չեզոքություն Վրաստանում ճգնաժամային իրադրության պայմաններում և տարանցման

հնարավորություն վրացական նավահանգիստների միջոցով: Սակայն վրացական Փոթի և Բաթումի նավահանգիստների բեռաթողունակությունը սահմանափակ է, ծառայությունների գները բարձր են: Հայկական կողմը Վրաստանի հետ ակտիվ երկխոսության արդյունքում ապահովեց տարանցիկ երթևեկությունը Կազբեկ-Վերին Լարս ավտոմոբիլային սահմանապահ կետով ռուս-վրացական սահմանում: Դա մեծացրեց Հայաստանից գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հնարավորությունները Ռուսաստան:

2008 թ. Հայաստանը և Վրաստանը համաձայնության եկան Երևան-Բաթումի ավտոմոբիլային ճանապարհի վերակառուցման մասին, որը կրճատեց այդ քաղաքների միջև հեռավորությունը 30%-ով: Հեռանկարում հնարավոր է այդ ճանապարհի շարունակումը մինչև Իրանի սահմանը, որը կապված է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի կառուցման հետ:

**Իրան:** Ավանդաբար զարգանում է համագործակցությունը Իրանի հետ, որը դարձել է Հայաստանի առևտրատնտեսական խոշոր գործընկերը: Իրանում բնակվում են ավելի քան 500 000 հայեր: Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման պայմաններում Իրանի հետ կարճ սահմանը Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն: Ավարտված է Իրան-Հայաստան գազատարի շինարարությունը: 2007–2012 թթ. ընթացքում Իրանը 1,558 մլրդ մ<sup>3</sup> գազ է մատակարարել Հայաստանից ստացած էլեկտրաէներգիայի դիմաց: Միայն 2012 թ. իրանական գազի արտահանումը կազմել է 481 մլն մ<sup>3</sup>: Նախագծի ընդհանուր արժեքը 130 մլն դոլար է:

Իրանի և Հայաստանի միջև համաձայնություն է ձեռք բերվել նաև Թավրիզից Երասխ նավթամթերքների տեղափոխման համար խողովակաշար կառուցելու վերաբերյալ: 2009 թ. Հայաստանի մայրաքաղաքում ստորագրվեց «Հայաստան-Իրան երկաթուղագծի շինարարության նախագծի իրականացման համագործակցության մասին հուշագիրը»: 470 կմ երկարությամբ երկաթգծի շինարարությունը կիրականացվի 4–5 տարում: Նոր երկաթուղին հնարավորություն կտա Հայաստանին դիվերսիֆիկացնել տրանսպորտային հաղորդակցությունը արտաքին աշխարհի, առաջին հերթին՝ Կենտրոնական Ասիայի և Չինաստանի հետ, վերածվել տարանցիկ երկրի:

**Թուրքիա:** 2009 թ. որոշ աշխուժացում նկատվեց հայ-թուրքական հարաբերություններում: Սահմանների բացումը կապահովեր Հայաստանի մուտքը թուրքական սևծովյան նավահանգիստներ Տրապիզոն և Սամսուն, որը կնպաստեր տրանսպորտային ծախսերի և, ընդհանուր առմամբ, ներքին գների նվազմանը: Բացի դրանից, սահմանների բացումը կվերացներ հայկական ապրանքների՝ թուրքական շուկա արտահանման ուղղակի արգելքը: Այս բոլորը, վերջին հաշվով, կարող էր խթան դառնալ Հայաստանի տնտեսության զարգացման համար: Հայաստանում այս փաստաթղթերը որոշ քա-

ղաքական ուժերի լուրջ դիմադրությանն հանդիպեցին, ոմանք դրանց մեջ սպառնալիք էին տեսնում՝ զիջումներ Եղեռնի միջազգային ճանաչման և Լեռնային Ղարաբաղի հարցում: Հայաստանի Սահմանադրական դատարանը ստորագրված փաստաթղթերը ճանաչել է համապատասխան երկրի Սահմանադրությանը: Սակայն Թուրքիայի ղեկավարությունը պայմանագրի վավերացումը պայմանավորում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմամբ: Հայկական կողմը, իր հերթին, հանդես է գալիս առանց նախապայմանների հարաբերությունների նորմալացման օգտին: Այս ամենի հետևանքով 2010 թ. փոխհարաբերությունների նորմալացման գործընթացը սառեցված է:

**Ռուսաստանի դաշնություն:** Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև տնտեսական հարաբերությունների զարգացումը պայմանավորված է ձևավորված արտադրական և գիտատեխնիկական սերտ ու բազմակողմանի կապերով, ռազմավարական փոխադարձ շահերով: Առևտրաարդյունաբերական համագործակցության զարգացման ու ամրապնդման նպատակով երկու պետությունների միջև կնքված է տնտեսական համագործակցության մինչև 2020 թ. ընդգրկող երկկողմանի Ծրագիր: Ռուսաստանը Հայաստանի դաշնային և ռազմավարական գործընկերն է՝ ինչպես երկկողմանի հարաբերություններում, այնպես էլ մի շարք միջազգային կազմակերպությունների շրջանակներում՝ ԱՊՀ, ՕԴԿԵ և ԵՅՐԱՀԶԸ: Հայաստանը քաղաքական որոշում է կայացրել անդամակցելու Մաքսային Միությանը և գործնական քայլեր է ձեռնարկում այդ, ինչպես նաև հետագայում Եվրասիական միության ձևավորմանը մասնակցելու նպատակով: Ռուսաստանը ևս քաղաքական ջանքեր է գործադրում Հայաստանի հարաբերությունները հարևանների հետ նորմալացնելու ուղղությամբ:

### **ՀՀ վճարային հաշվեկշիռը**

Վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը վիճակագրական արտացոլումն են տվյալ երկրի և արտաքին աշխարհի միջև տնտեսական բոլոր գործառնությունների: Վճարային հաշվեկշիռը բնորոշում է ժամանակի որոշակի միավորի ընթացքում՝ 1 տարում իրականացված գործառնությունները, իսկ միջազգային ներդրումային դիրքն արտացոլում է նախկինում իրականացված բոլոր տնտեսական գործառնությունների շնորհիվ արտաքին աշխարհի հանդեպ ձևավորված երկրի ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ժամանակի որոշակի պահի:

ՀՀ վճարային հաշվեկշռի ցուցանիշները վերջին տարիներին հետևյալն են.

Աղյուսակ 8

ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշները (մլն դոլլար)


	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Ընթացիկ հաշիվ	-278,4	-200,5	-148,0	-189,4	-19,6	-51,7	-117,1	-589,2	-1381,8	-1368,8	-1373,2	-1108,2	-1056,4
Ապրանքներ	-463,3	-420,2	-368,7	-434,1	-457,9	-587,9	-895,8	-1600,2	-2663,5	-2081,3	-2032,6	-2077,6	-2073,3
Ծառայություններ	-55,8	-17,7	-40,7	-68,3	-98,9	-119,9	-130,3	-212,5	-327,1	-268,1	-242,2	-312,1	-331,8
Եկամուտներ	52,9	63,5	88,1	94,5	107,4	132,5	215,1	278,7	471,2	166,6	338,7	558,5	629,5
Տրանսֆերտներ	188,1	174,0	173,4	218,4	429,8	523,6	693,9	944,7	1137,6	813,9	562,9	723,1	719,2
<b>Կապիտալի և ֆինանսական հաշիվ</b>	<b>261,3</b>	<b>188,9</b>	<b>147,8</b>	<b>190,8</b>	<b>25,2</b>	<b>47,9</b>	<b>132,8</b>	<b>591,4</b>	<b>1369,3</b>	<b>1349,6</b>	<b>1355,7</b>	<b>1137,5</b>	
կապիտալի հաշիվ	28,3	30,1	68,1	89,9	41,3	73,2	86,3	142,7	148,8	89,1	107,9	96,2	
ֆինանսական հաշիվ	233,0	158,8	79,8	100,9	-16,1	-25,3	46,5	448,7	1220,4	1260,4	1247,8	1041,3	
պահուստային ակտիվներ	-19,2	-19,7	-81,6	-47,2	-26,3	-162,0	-366,0	-546,1	233,5	-600,3	111,5	-132,9	
<b>Մաքուր սխալներ ու բացթողումներ</b>	<b>17,0</b>	<b>11,5</b>	<b>0,17</b>	<b>-1,4</b>	<b>-5,5</b>	<b>3,8</b>	<b>-15,7</b>	<b>-2,2</b>	<b>-12,5</b>	<b>19,3</b>	<b>17,5</b>	<b>-29,4</b>	

Ընթացիկ գործառնությունների հաշվի պակասությունը Հայաստանում ունի շարունակական բնույթ: Դա հիմնականում հետևանքն է ապրանքային հաշվեկշռի բացասական մնացորդի, բոլոր տարիներին ապրանքների ներմուծումը գերազանցել է արտահանմանը: Այդ պակասությունը սկսած 2003 թ. անընդհատ աճել է՝ հասնելով ամենաբարձր մակարդակին 2008 թ.:

Գծապատկերից երևում է, որ 2009 թ. պակասությունը որոշ չափով կրճատվել է և կայունացել, սակայն տակավին բավական բարձր է: 2008 թ. հետո այն տատանվում է ՀՆԱ-ի նկատմամբ մոտ 25%-ի շուրջ:

2008 թ. վճարային հաշվեկշիռը կրել է տարվա կեսին սկսված ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը: Բայց, քանի որ Հայաստանի ֆինանսական համակարգը էական դեր չէր կատարում տնտեսության զարգացման մեջ, Հայաստանը զերծ մնաց ֆինանսական ճգնաժամի առաջին և ուղղակի ազդեցությունից: Տարին ամփոփվեց 6.8% տնտեսական աճով. տարվա առա-

ջին կեսը բնութագրվում էր տնտեսական աճի և կապիտալի ներհոսքի բարձր տեմպերով, պարտքի վերաֆինանսավորման խնդիրներ չկար, ֆինանսական հատվածը ներկայացված էր միայն բանկային համակարգով, որը չունեի վարկավորման մեծ ծավալներ և 2008 թվականին ներգրավել էր մոտ 600 մլն դոլարի արտաքին վարկեր:



**Գծապատկեր 8**

**ՀՀ ապրանքային հաշվեկշռի ցուցանիշների դինամիկան**

Սակայն հաջորդ փուլում դրամական փոխանցումների ծավալների կրճատումը կամ աճի տեմպերի նվազումը, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունում շինարարության կրճատմանը զուգահեռ՝ աշխատողների դրամական փոխանցումների նվազումը, օտարերկրյա ներդրումների կրճատումը (ինչը համաշխարհային միտում էր՝ որպես պահանջարկի կրճատման հետևանք), ֆինանսավորման աղբյուրների բացակայությունը, ապագայի հանդեպ ներդրողների անվստահությունը, արտահանման նվազումը (որի հիմքում ինչպես ապրանքների նկատմամբ ներմուծող երկրների պահանջարկի կրճատումն է, այնպես էլ համաշխարհային ապրանքային շուկաներում գների համընդհանուր անկումը) հանգեցրին արտադրության ծավալների կրճատման, վճարային հաշվեկշռի վատթարացման (աղյուսակ 8):

Արտերկրի հետ Հայաստանի արտաքին գործառնությունների՝ նախորդ տարիներին դրսևորված միտումները 2008 թ. հետո որոշակի փոփո-


խոթյունների են ենթարկվել: 2009 թ. և հաջորդ տարիներին կրճատվել են մասնավոր տրանսֆերտների ծավալները, որոնք մինչ այդ անընդհատ աճում էին, արտաքին առևտրի հաշվեկշռի նախորդ տարիներին դրսևորվող բարելավման միտումները կտրուկ փոխվեցին, և ներմուծման աճի բարձր տեմպերի հետևանքով՝ հաշվեկշռի բացասական մնացորդն արագ տեմպերով աճեց, իսկ ֆինանսական ներհոսքի ավելացումը հանգեցրեց արտաքին պարտքի ավելացմանը: Արտահանման կտրուկ նվազման հետևանքով ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ում ամենաբարձր մակարդակին հասավ 2008 թ., դառնալով 11.4%, որը ավելի քան կրկնակի բարձր էր նախորդ տարվա համեմատ: Բացարձակ ծավալով ընթացիկ հաշվի պակասուրդը կազմեց 1381,8 մլն դոլար, 2007 թ. 589,2 մլն դոլարի դիմաց, որը հետագա տարիներին որոշ չափով կրճատվեց՝ 2012 թ. դառնալով 1056,4 մլն դոլար: Ընդ որում, եթե 2008 թ. վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի ամբողջ աճը պայմանավորվել է «Ապրանքներ» հոդվածի բացասական հաշվեկշռի մեծացմամբ (ապրանքների և ծառայությունների ներմուծման աճը՝ 34.9%, այն դեպքում, երբ արտահանումը նվազել է 7.0%-ով), ինչը, աշխատուժից եկամուտների ու մասնավոր տրանսֆերտների զուտ ներհոսքի շուրջ 31.5% աճով հանդերձ, այնուամենայնիվ հանգեցրել է ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմանը: Պետք է նկատի ունենալ, որ աշխատուժից եկամուտների ու մասնավոր տրանսֆերտների ներհոսքի աճը, մի կողմից՝ ուղղակիորեն նպաստում է ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը, սակայն, մյուս կողմից էլ՝ եկամուտների ավելացման միջոցով հանգեցնում է ներմուծման ծավալների աճի:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 8-ից՝ հետագա երկու տարիներին վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի կրճատումը ուղեկցվում է տրանսֆերտների կրճատմամբ: Եթե 2007 թ. տրանսֆերտները և աշխատանքային եկամուտները ծածկում էին ապրանքների և ծառայությունների բացասական մնացորդի 67,4%-ը, ապա 2010 թ. այս ցուցանիշը իջավ 39,6%-ի, և միայն հետագա տարիներին տրանսֆերտների աճը բարելավեց այս ցուցանիշը 2012 թ. հասնելով 56,0%-ի: Այժմ ավելի մանրամասն քննարկենք վճարային հաշվեկշռի բաղկացուցիչ մասերը՝ ընթացիկ գործառնությունների և կապիտալի ու ֆինանսական հաշիվները:

### **Ընթացիկ հաշիվ**

Արտաքին առևտրի ընդհանուր ծավալները (ապրանքաշրջանառությունը) Հայաստանում 2012 թվականին ՀՆԱ-ի 54 տոկոսն են կամ 5.4 մլրդ դոլար: Ապրանքաշրջանառության շուրջ 30%-ը բաժին է ընկնում արտահանման գործարքներին, իսկ մնացածը՝ ներմուծմանը: 2012 թ. ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալները գերազանցում էին 2000 թ. մակարդակը 5 անգամ և նրա նախորդ տարիներին գրանցված 2008 թ. ամենաբարձր

մակարդակը՝ 1,1 անգամ: Ապրանքների արտահանումը 2012 թ.-ին հասավ 1.7 միլիարդ դոլարի՝ գերազանցելով բոլոր նախորդ տարիներին գրանցված ծավալները իսկ ներմուծումը 3.7 մլրդ դոլար՝ աճելով նախորդ տարիների համեմատ: Արդյունքում, արտաքին առևտրի պակասուրդը 2000 թվականի համեմատ աճել է մոտ 4,5 անգամ:



**Գծապատկեր 9**

**ՀՀ արտաքին առևտրի հարաբերական ցուցանիշների փոփոխությունները**


Արտաքին առևտրի փոփոխությունների մասին առավել լավ պատկերացում է տալիս ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերական մակարդակների քննարկումը:

Գծապատկեր 9-ից հստակ երևում է, որ մինչև 2005 թվականը ՀՆԱ-ի նկատմամբ մաքուր արտահանումը անընդհատ բարելավվել է, սակայն հետագայում ներմուծման ավելի արագ տեմպերով աճի հետևանքով նորից պակասուրդը ավելացել է: Արդյունքում, 2009–2012 թթ. ապրանքների և ծառայությունների արտահանումը ՀՆԱ-ի նկատմամբ միջինում կազմել է շուրջ 21%, ինչը շուրջ 25 տոկոսային կետով զիջում է ներմուծման համանման ցուցանիշին:

Արտաքին առևտրի շրջանառության այդպիսի ցուցանիշների ձևավորման վրա էական ազդեցություն է թողնում ազգային արժույթի փոխարժեքը: 2011–2012 թթ. հայկական դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ



դրսևորում էր դանդաղ արժեզրկում: Տարեվերջին, նախորդ տարվա վերջի համեմատ ձևավորված միջին փոխարժեքը արժեզրկվեց 2011 թ. 5,9%, 2012թ.՝ 7,3%: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ եթե 2003 թ. միջին տարեկան փոխարժեքը 578,8 դրամ էր դոլարի դիմաց, ապա 2008 թ. ամրացավ 306 դրամ մակարդակում: Դրամի այսպիսի արժևորումը կաշկանդում էր արտահանումը՝ միաժամանակ խթանելով ներմուծումը:



**Գծապատկեր 10**

**ՀՀ դրամի կուրսի դինամիկական ԱՄՆ դոլլարի նկատմամբ**

Արտաքին առևտրի լուրջ անհաշվելիչովածությունը՝ պայմանավորված նաև հարևան երկրներից տնտեսական մեկուսացմամբ, փոխհատուցվում է միջազգային, այդ թվում՝ հայկական սփյուռքի օգնությամբ, արտասահմանում աշխատող հայերի դրամական փոխանցումներով և օտարերկրյա ուղղակի ներդրումներով: Այս ամենը, ապահովելով բնակչության եկամուտների կայուն աճ, իր հերթին նպաստել է ներմուծման ավելացմանը: Սրա պատճառներից է նաև այն հանգամանքը, որ հայրենական արտադրողները մրցունակ չեն բազմաթիվ ապրանքների շուկաներում՝ էժան արտասահմանյան հագուստ ու կոշիկներ, կենցաղային տեխնիկա, էլեկտրատեխնիկա և այլն:

Ընթացիկ հաշվի «ապրանքներ» հոդվածի աշխարհագրական կառուցվածքը բնութագրվում է հետևյալ տվյալներով.

ՀՀ ապրանքների արտահանման և ներմուծման  
աշխարհագրական կառուցվածքը 2011 – 2012 թթ., %

Արտահանում	2011 թ.	2012 թ.	Ներմուծում	2011 թ.	2012 թ.
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
այդ թվում					
Ռուսաստան	16.7	19.6	Ռուսաստան	21.5	24.8
Գերմանիա	11.8	10.7	Չինաստան	9.8	9.4
Բուլղարիա	11.4	9.1	Գերմանիա	5.9	6.2
Բելգիա	5.3	8.9	Իրան	5.2	5.2
Իրան	8.0	6.8	Ուկրաինա	5.6	5.1
ԱՄՆ	7.5	6.1	Թուրքիա	5.8	5.0
Նիդերլանդներ	8.8	5.6	ԱՄՆ	3.6	3.4
Կանադա	5.3	6.0	Իտալիա	4.1	4.0
Վրաստան	4.6	5.7	Ճապոնիա	1.7	2.3
Իսպանիա	6.7	2.1	Բուլղարիա	2.5	2.0
Ղազախստան	0.3	0.3	Ղազախստան	0.6	0.2
Բելառուս	0.5	0.5	Բելառուս	0.7	0.8

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության գլխավոր գործընկեր երկրներն են Ռուսաստանը, Գերմանիան, Չինաստանը, Բուլղարիան, Բելգիան, Իրանը, Ուկրաինան, ԱՄՆ-ը, Թուրքիան, Նիդերլանդները, Կանադան: Սակայն շատ երկրների հետ առևտուրը միակողմանի է: Օրինակ՝ Չինաստան, Ուկրաինա, Թուրքիա, Իտալիա, Ճապոնիա մենք ապրանքներ չենք արտահանում, իսկ Բելգիայից, Նիդերլանդներից, Կանադայից, Վրաստանից, Իսպանիայից չենք ներմուծում:

Ե՛վ արտահանման, և՛ ներմուծման ամենամեծ բաժինը պատկանում է Ռուսաստանին: 2012 թ. Ռուսաստանի և Հայաստանի միջև արտաքին առևտրի շրջանառությունը աճեց 20,3%-ով և դարձավ 1339,2 մլն դոլար: Ընդ որում, Հայաստանից Ռուսաստան արտահանման ծավալները 2011 թ. համեմատ ավելացան 26,0%-ով և դարձան 280 մլն դոլար, որը Հայաստանի ամբողջ արտահանման 19,6%-ն է: Ռուսական արտադրության ապրանքների

ներմուծումը Հայաստան 2012 թ. ավելացավ 18,9%-ով՝ 1 մլն դոլար: 2012 թ. Հայաստանի արտաքին առևտրի շրջանառության մեջ Ռուսաստանի բաժինը դարձավ 23,5%:

Աղյուսակ 10

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև արտաքին առևտրի դինամիկան, մլն դոլար

	2007 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.
<b>Ապրանքաշրջանառություն</b>	821.3	896.4	723.2	859.1	994.4	1339.2
<i>Նախորդ տարվա նկատմամբ, %</i>	165.5	109.5	80.7	118.8	115.8	134.7
<b>Արդաահանում</b>	655.4	692.3	612.0	700.6	785.1	1059.2
<i>Նախորդ տարվա նկատմամբ, %</i>	167.1	106.1	88.4	114.5	112.1	134.9
<b>Ներմուծում</b>	165.9	204.2	111.2	158.5	209.3	280.0
<i>Նախորդ տարվա նկատմամբ, %</i>	159.5	122.6	54.5	142.5	132.0	133.8
<b>Հաշվեկշիռ</b>	489.5	488.1	500.8	542.1	575.8	779.1

Աղբյուրը: по данным ФТС России без учета неорганизованной торговли.

Այս ցուցանիշը 2011 թ. համեմատ ավելացել է 15,0%-ով: Ռուսաստանը նախկինի պես մնում է Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերը: Համեմատության համար նշենք, որ արտաքին առևտրի շրջանառության ցուցանիշի ծավալների մեծությամբ հաջորդը Չինաստանն է՝ 7,6%-ով: Ինչպես երևում է աղյուսակ 10-ի տվյալներից՝ ամբողջ դիտարկվող ժամանակաշրջանում Ռուսաստանի հետ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդն անընդհատ ավելացել է և 2011 թ. դարձել 779,1 մլն դոլար:

Ընդհանուր առմամբ, նախորդ տարիներին Հայաստանի արտաքին առևտրային հարաբերությունները էական տեղաշարժեր չեն գրանցել, ինչի վկայությունն է այն փաստը, որ արտաքին առևտրաշրջանառության աճի տեմպերը չեն գերազանցել ՀՆԱ աճին: Խորացող առևտրային հարաբերություններով հանդերձ՝ պետք է նկատել, որ Հայաստանի տնտեսության բացվածությունը դեռևս բավական փոքր է հատկապես ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման ցուցանիշով:

**Ապրանքների արդաահանում:** Արտահանման խոշոր շուկաներն են Եվրամիության անդամ և ԱՊՀ երկրները: Ըստ ԱՎԾ տվյալների՝ 2008 – 2011 թթ. միջին հաշվով Հայաստանից արտահանվող ապրանքների 48,0%-ը

նողվել է ԵՄ երկրներ, 20,0%-ը՝ ԱՊՀ երկրներ, մնացած 32%-ը՝ այլ երկրներ: Ներմուծման մեջ 30%-ը բաժին է ընկնում ԱՊՀ երկրներին, մոտավորապես այդքան էլ Եվրամիությանը (ԱՎԾ տարեգիրք, 2012 թ., էջ 529): Մնացած 40 տոկոսը առավելապես ներմուծվում են Իրանից, ԱՄՆ-ից, Չինաստանից, Թուրքիայից և մի շարք այլ երկրներից:

Արտահանման մեջ առավել մեծ տեսակարար կշիռ զբաղեցնող վեց երկրներն են՝ Ռուսաստանը, Գերմանիան, Բուլղարիան, Նիդերլանդները, Իրանը և ԱՄՆ-ը, որոնց բաժին է ընկնում ամբողջ արտահանման 64,2%-ը: 2008 թ. համեմատ այստեղ տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ: Ռուսաստանի, Գերմանիայի և Նիդերլանդների հետ առաջին վեցյակում են եղել նաև Բելգիան և Վրաստանը, որոնք միասին ապահովել են արտահանման ընդհանուր ծավալի մոտ 81%-ը:

Ինչպես փաստեցինք, Հայաստանի արտահանման ծավալները բավական փոքր են: Ընդ որում, արտահանման մեծ մասը ապահովվում է մի քանի ապրանքախմբերով և ապրանքատեսակներով: Արտահանման միտումների, դրանց վրա քաղաքականությունների կամ տնտեսական վիճակի ազդեցության գնահատումների համար հարկավոր է, նախ, վերլուծել և հասկանալ արտահանվող ապրանքատեսակների քանակական և արժեքային մեծությունները կամ, այլ կերպ ասած՝ շուկաների ծավալները:

Ապրանքների արտահանումը 2011 թվականին եղել է 1580.0 մլն դոլար, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 34,4%-ով: 2012 թ. այս տեմպերը նվազեցին՝ հասնելով 5.4%-ի:

2011 թվականի արտահանման ծավալների 82,3% ապահովել է 8 ապրանքախումբ: 2008–2011 թթ. այդ խմբերի կառուցվածքային տեղաշարժերը բնութագրվում են հետևյալ տվյալներով (%-ով արտահանման ընդհանուր ծավալում).


Աղյուսակ 11

**Արտահանման մեջ առանձին ապրանքային խմբերի կառուցվածքային փոփոխությունները 2008 – 2011 թթ.**

	Ոգելից և ոչ ոգելից խմիչքներ	Ծխախոտ	Հանքաքար	Վառելիքային նյութ	Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	Սև մետաղներ	Պղինձ և դրանից իրեր	Այլումին և դրանից իրեր
<b>2008</b>	13,8	0,7	11,9	0,6	16,4	20,3	6,5	3,8
<b>2011</b>	11,0	1,2	21,5	8,0	14,7	10,1	9,0	6,8

Ինչպես տեսնում ենք՝ 2008 թ. համեմատ 2011 թ. երեք ապրանքախմբերում նկատվում է նվազման միտում: Մասնավորապես՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր» ապրանքախմբում նվազումը պայմանավորված է

ադամանդի միջազգային շուկայում կառուցվածքային փոփոխություններով և գների նվազմամբ: Սև մետաղների արտահանման կրճատումը կապված է դրա հումքի քանակների նվազման հետ: 2009 թ. հանքաքարի արտահանումը նախորդ տարվա համեմատ կրճատվեց մոտ 8%-ով, ինչը հետևանքն էր միջազգային շուկայում գների անկման և պահանջարկի կրճատման, սակայն արդեն հաջորդ տարի այն կրկնապատկվեց, ևս 25%-ով աճելով 2011 թ.-ին: Ըստ գլխավոր ապրանքախմբերի արտահանման ծավալների փոփոխությունները ՀՀ-ում բնութագրվում են հետևյալ տվյալներով.




**Գծապատկեր 11**

**ՀՀ արտահանման ծավալների փոփոխությունները՝ ըստ ապրանքային խմբերի 2005–2011 թթ.**

2011 թվականին սև մետաղները և հանքաքարը հիմնականում արտահանվել են Նիդեռլանդներ (երկաթամիահավածք և մոլիբդենի հանքաքար), Գերմանիա (մոլիբդեն), Բուլղարիա (պղնձի հանքաքար և այլումին) և ԱՄՆ (այլումին): Համաշխարհային շուկայում մետաղների գների նվազումը ամբողջ խորությամբ չի արտացոլվել ՀՀ արտաքին առևտրում, քանի որ ձեռնարկություններն իրենց արտադրանքի որոշակի մասը արտահանել են նախօրոք կնքված պայմանագրերով և գների նվազման պայմաններում որոշ չափով զերծ են մնացել բացասական հետևանքներից: Այդ պատճառով, բացի սև մետաղների խմբից, մյուս բոլոր ապրանքային խմբերում դիտվում է արտահանման ծավալների աճ:

2008 թ. համեմատ 2011 թ. արտահանվող ապրանքների ծավալներն ավելացել են ԱՊՀ միայն երկու երկրում՝ դեպի Ռուսաստանի Դաշնություն՝ 14,1 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են ոգելից խմբերը,

սննդամթերք, գյուղատնտեսական հումք, ադամանդ և ոսկերչական իրեր, հանքային ջուր և արհեստական կաուչուկ, տեքստիլ, կոշիկ) և Բելառուս՝ 3,1 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են ոգելից խմիչքներ):




**Գծապատկեր 12**

**ՀՀ արտահանման կառուցվածքը՝ ըստ հիմնական գործընկեր երկրների 2012 թվականին**

Եվրամիության երկրներ արտահանման ծավալները աճել են 34,5 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է պղնձի և մոլիբդենի հանքաքար, երկաթամիահավածք, պղինձ և մոլիբդեն): 48 մլն դոլարով ավելացել է արտահանումը ԱՄՆ, 81 մլն դոլարով՝ Իրան, 14,4 մլն դոլարով Չինաստան, 54,5 մլն դոլարով՝ Կանադա (հիմնականում արտահանվել է ադամանդ, պղինձ, մոլիբդեն, էլեկտրաէներգիա): Մյուս կողմից՝ կտրուկ նվազել են արտահանման ծավալները այնպիսի կարևոր գործընկեր երկրների հետ, ինչպիսիք են Ուկրաինան, Բելգիան, Միացյալ Թագավորությունը, Իտալիան, Նիդերլանդները, Լեհաստանը, Վրաստանը: Այդ երկրներ արտահանվում են հիմնականում պղնձի հանքաքար, ադամանդ, երկաթամիահավածք, մոլիբդենի հանքաքար, ոչ թանկարժեք մետաղներ և ոգելից խմիչքներ:

**Ապրանքների ներմուծում:** 2012 թվականին ներմուծումը եղել է 3738,2 մլն դոլար, որը գերազանցում է 2009 թ. մակարդակը 32,1 տոկոսով, իսկ նախորդ տարվա համեմատ ավելացել է 2,3 տոկոսով: Եթե համադրենք նախաճգնաժամային 2005, ճգնաժամային 2008 և ետճգնաժամային 2011 թթ., ապա առանձին ապրանքախմբերի ներմուծման ծավալների փոփոխությունները կարելի է ցույց տալ հետևյալ գծապատկերում.



**Գծապատկեր 13**

**ՀՀ ներմուծման ծավալների փոփոխությունները ըստ ապրանքային խմբերի 2005–2011 թթ.**


Որոշ ապրանքային խմբերում ներմուծման ծավալների կրճատումը պայմանավորված է տարբեր գործոններով: Եթե, օրինակ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ներմուծման ծավալների կրճատման պատճառը միջազգային գների աճն է, ապա սև մետաղներինը՝ շինարարության տեմպերի կրճատումը: Էլեկտրասարքերի և տրանսպորտային միջոցների ներմուծման կրճատումը հետևանք է դրանց նկատմամբ պահանջարկի կրճատմամբ:

Ի տարբերություն արտահանման՝ ներմուծվող ապրանքախմբերի ցրվածությունն ավելի մեծ է: Դրա մասին են վկայում ներմուծման համեմատաբար ցածր բևեռացման ցուցանիշները: Սկսած 2003 թ. ապրանքային և աշխարհագրական բևեռացման ցուցանիշները ցուցաբերում են նվազման միտում և վերջին մի քանի տարիներին միջինում եղել են համապատասխանաբար՝ 30,0 և 27,0 տոկոս: Բևեռացման ցածր ցուցանիշի նվազումը հետևանք է Հայաստան ապրանքներ ներմուծող գործընկեր երկրների թվի ավելացման, ինչը դրական տեղաշարժ է, քանի որ թուլացնում է երկրի կախվածությունը այս կամ այն երկրի անբարենպաստ տնտեսական միջավայրի հնարավոր ազդեցություններից:

Ըստ երկրների ներմուծման ծավալները համեմատելիս՝ աչքի են գարնում էական կառուցվածքային տեղաշարժեր: 2011 թ. 2008 թ.-ի համեմատ՝ ներմուծման ընդհանուր ծավալը ՄԻՖ գներով կրճատվել է 281,0 մլն դոլարով: ԱՊՀ երկրներից ներմուծումը կրճատվել է 54,0 մլն դոլարով, ինչը պայ-

մանավորված է հիմնականում Ուկրաինայից ներմուծվող երկաթյա և պողպատյա ձողերի պահանջարկի կրճատմամբ: Այդ ընթացքում 40.0 մլն դոլարի չափով ավելացել է Ռուսաստանից ներմուծումը (ներմուծվում է հիմնականում բնական գազ, ցորեն, չմշակված ալյումին, նավթամթերք և մարդատար ավտոմեքենաներ, քիմիական արդյունաբերության արտադրանք, թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր):

Առավել կրճատվել է Եվրամիության անդամ երկրներից ներմուծման ծավալը՝ 192 մլն դոլարով: Ավստրիայից կրճատումը եղել է 113 (հիմնականում՝ անմշակ ոսկի), Ֆրանսիայից՝ 45 (հիմնականում՝ սարքեր և սպարատներ), Բելգիայից՝ 45 մլն դոլար (թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր): Թեպետ ընդհանուր առմամբ այլ երկրներից ներմուծումը կրճատվել է 35 մլն դոլարի չափով, փոխարենը զգալորեն ավելացել է Շվեյցարիայից՝ 58,6 մլն, Չինաստանից՝ 22,1 մլն (ներմուծվում են հիմնականում սպառողական ապրանքներ և սարքավորումներ), ԱՄԷ-ից՝ 17,9 մլն դոլարով: Մինևույն ժամանակ ներմուծման ծավալները կրճատվել են այնպիսի զարգացած երկրներից, ինչպիսիք են ԱՄՆ-ը՝ 71,4 մլն (ներմուծվում է հիմնականում օգտագործված հագուստ, ընտանի թռչնի միս ու մսամթերք, անմշակ ոսկի), Ճապոնիայից՝ 96,5 մլն (ներմուծվում են հիմնականում մարդատար ավտոմեքենաներ ու սարքավորումներ) և Կորեայից՝ 24,5 մլն դոլարով (ներմուծվում է հիմնականում նավթամթերք): 2011 թ.-ին առանձին երկրների տեսակարար կշիռները ներմուծման ընդհանուր ծավալի մեջ բնութագրվում են հետևյալ տվյալներով.



**Գծապատկեր 14**

**ՀՀ ներմուծման կառուցվածքը 2011 թվականին՝ ըստ հիմնական գործընկեր երկրների**



Գծապատկերը հուշում է, որ, ի տարբերություն արտահանման, ներմուծման ապրանքային բևեռացումը անհամեմատ ավելի ցածր է: Եթե արտահանման դեպքում առավել խոշոր 12 գործընկեր երկրներին բաժին էր ընկնում ամբողջ արտահանման 81,4%-ը, ապա ներմուծման դեպքում՝ այդ ցուցանիշը 68,4% է: Այսինքն՝ ներմուծման մեջ ավելի շատ երկրներ են ընդգրկված, քան արտահանման:


**Եկամուտներ և տրանսֆերտներ:** Վճարային հաշվեկշռի կարևոր բաղադրիչներից է «Եկամուտներ» հոդվածը իր դրական ցուցանիշով՝ 558,5 մլն դոլարով, մինչդեռ 2009 թ. իջել էր վերջին տարիների իր նվազագույն մակարդակին՝ 166,6 մլն դոլարի: Այսպիսի աճը պայմանավորված է, առաջին հերթին, աշխատողների և զինծառայողների եկամուտների աճով, որը եղել է 1052,0 մլն դոլար: Մակայն քանի որ շատ գործոնային եկամուտներ ունեցել են բացասական մեծություն, օրինակ՝ ներդրումներից եկամուտները, ապա այս հոդվածի գումարային մեծությունը համեմատաբար փոքր է:

«Եկամուտներ» հոդվածի՝ դեպի դուրս փոխանցումների մեջ զգալի են եղել ուղղակի ներդրմամբ ձեռնարկություններում ոչ ռեզիդենտների ստացած և վերաներդրած եկամուտները՝ 237,2 մլն դոլար (2008 թ. համեմատ ավելացել է 30,0 մլն դոլարով): Ընդ որում, թեև ուղղակի ներդրմամբ ձեռնարկություններում ոչ ռեզիդենտների ստացած և վերաներդրած եկամուտը փաստացի հոսք չի ենթադրում, քանի որ հաշվարկային մեծություն է, ուղղակի ավելացնում է ոչ ռեզիդենտի ներդրումը տվյալ ձեռնարկությունում, սակայն արտացոլվում է ընթացիկ հաշվի համապատասխան հոդվածում և, ի վերջո, ազդում ընթացիկ հաշվի մեծության վրա (մեծացնելով ընթացիկ հաշվի պակասուրդը):

Ընդհանուր առմամբ, 2011 թ. ՀՀ բանկային համակարգով ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների՝ ընթացիկ մասնավոր և պետական տրանսֆերտների և գործոնային եկամուտների ներհոսքը կազմել է 1281,5 մլն դոլար, այնինչ 2008 թ. այս ցուցանիշը 1608,2 մլն դոլար էր (նվազումը՝ 20,3%): Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի առանձին տարրերի փոփոխությունները ներկայացնենք գծապատկերի տեսքով (գծապատկեր 15):

ՀՀ վճարային հաշվեկշռի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են:

Ընդ որում, 2008–20011 թթ. ընթացքում տրանսֆերտների կրճատմամբ և եկամուտների որոշակի աճով հանդերձ՝ նշված հոդվածների միջոցով ապրանքների ու ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի ֆինանսավորման չափը մնացել է նույնը՝ 53.6%: Պատճառն այն է, որ ընթացիկ հաշվի բացասական մնացորդը այդ ժամանակաշրջանում ևս կրճատվել է:



Գծապատկեր 15

**Ընթացիկ գործառնությունների հաշվի և նրա տարրերի դինամիկան ՀՀ-ում 2000–2011 թթ.**

Ընթացիկ հաշվի բաղադրատարրերի՝ վերը պատկերված դինամիկայի շնորհիվ 2011 թվականին ընթացիկ հաշվի պակասորդը նախորդ երեք տարիների համեմատ կրճատվել է և դարձել 1108,2 մլն դոլար, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 10.9% է՝ նախորդ տարվա 14.8%-ի փոխարեն: Ինչպես արդեն նշել ենք, ընթացիկ հաշվի բացասական մեծության վրա ազդում է նաև նախկինում կատարված օտարերկրյա ներդրումներից ստացված և վերաներդրված եկամուտների աճը, ինչը թեև փաստացի հոսք չի ենթադրում, սակայն ազդում է ընթացիկ հաշվի պակասորդի մեծության վրա, քանի որ, ըստ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, գրանցվում է ընթացիկ հաշվում բացասական նշանով՝ մեծացնելով ընթացիկ հաշվի պակասորդը: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ վերլուծական նպատակներով կարելի է որպես ընթացիկ հաշվի պակասորդ դիտարկել առանց վերաներդրված եկամտի ընթացիկ հաշվի մնացորդը: Այդ դեպքում ընթացիկ հաշվի փաստացի մնացորդը առանց վերաներդրումների (237,2 մլն դոլար) կլինի 871,0 մլն դոլար, որը ՀՆԱ-ի 8,6% է:

**Կապիտալի և ֆինանսական հաշիվ**

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասորդը հաշվեկշռվում է կապիտալի ու ֆինանսական հաշվով ստացվող միջոցների ներհոսքով: Քանի որ ընթացիկ հաշվի պակասորդը 2008 թ. հետո մինչև 2011 թ. անընդ-

հատ կրճատվել է (աղյուսակ 8), ապա, համապատասխանաբար, կապիտալի ու ֆինանսական հաշվի մնացորդները նույն չափով նվազել են (եթե անտեսում ենք զուտ սխալներն ու բացթողումները): Կապիտալի հաշվի այդ մնացորդը 2011 թ. եղել է 1137,5 մլն դոլար 2008 թ. 1369,3 մլն դոլարի դիմաց: Այսինքն՝ ներհոսքը կրճատվել է 231,8 մլն դոլարով: Դրանից 52,6 մլն դոլարը բաժին է ընկնում կապիտալի անհատույց փոխանցումներին: 2008 թ. համեմատ նվազել է հատկապես ֆինանսական հաշիվը, գլխավորապես ի հաշիվ ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատման:

Կապիտալի հաշվի հիմնական բաղադրատարրը՝ կապիտալ տրանսֆերտները, 2011 թ. եղել են 96,2 մլն դոլար: Այս ցուցանիշը 2007–2008 թթ. համեմատ կրճատվել է մոտ 35,0%-ով կամ 50,0 մլն դոլարով: Սա հետևանքն է «Լինսի հիմնադրամի» և «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրերի շրջանակներում ստացված պետական տրանսֆերտների նվազման:

Որպես վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի՝ 2011 թվականին դրսևորված առանձնահատկություն կարելի է նշել ուղղակի ներդրումների զգալի կրճատումը և պահուստային ակտիվների աճը՝ նշված հոսքերը համապատասխանաբար կազմել են 447,4 և -132,9 մլն դոլար: Ֆինանսական հաշվում տեղի ունեցած տեղաշարժերը կարելի է նկարագրել հետևյալ ցուցանիշների օգնությամբ.

Աղյուսակ 12

**Վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի ցուցանիշները  
(մլն ԱՄՆ դոլար)**

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011
Ուղղակի ներդրումներ (զուտ)	925,2	724,8	561,8	447,6
Պորտֆելային ներդրումներ (զուտ)	8,4	-3,8	10,7	-10,3
Այլ ներդրումներ (զուտ)	53,3	1139,8	563,7	737,1
Պահուստային ակտիվների փոփոխություն	233,5	-600,2	111,4	-132,9
Ընդամենը	1220,4	1260,4	1247,7	1041,3


Ինչպես տեսնում ենք աղյուսակից, 2011 թ. 2008 թ նկատմամբ ուղղակի ներդրումներն ավելի քան կրկնակի կրճատվել են: Ընդ որում, եթե 2008 թ. 935,0 մլն դոլար ներդրումներից միայն 10,0 մլն դոլարն էր ներդրվել արտասահմանում, ապա 2011 թ. կատարված 525,4 մլն դոլար ներդրումներից 78,0 մլն-ը ներդրվել է արտասահմանում (համապատասխանաբար 1,1 և 14,9%): Ընթացիկ հաշվի այնպիսի բարձր պակասուրդի պայմաններում, ինչպիսին դիտվում է Հայաստանում, կապիտալի այսպիսի «փախուստը» ավելի է դժվարացնում վճարային հաշվեկշռի հաշվեկշռվածության ապահովումը:

Միայն արտաքին վարկերի ներգրավման հետևանքով զուտ պարտավորությունները 2011 թ. աճել են 825,2 մլն դոլարով 2008 թ. 633,8 մլն դոլարի

փոխարեն: Արդյունքում՝ ֆինանսական հաշվով գրանցված զգալի ներհոսքը ընթացիկ հաշվի պակասորդի զգալի կրճատման պայմաններում հնարավորություն է տվել տարվա ընթացքում ավելացնել ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պահուստները շուրջ 133,0 մլն դոլարով: Ոչ ռեզիդենտների՝ ՀՀ ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումները նույնպես խիստ կրճատվել՝ մինչև 258,9 մլն դոլար (2008թ.՝ 819,8 մլն դոլար):

Ինչպես և նախորդ բոլոր տարիներին՝ Հայաստանի միջազգային ներդրումային դիրքը 2011 թ. վերջի դրությամբ բացասական էր և կազմեց 6718,5 մլն դոլար՝ 2008 թ. համեմատ համարյա կրկնակի աճելով: Ընդ որում, ակտիվներն ավելացել են 1726.0 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 4973.0 մլն դոլարով:

Վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի պայմաններում տնտեսության գնահատման կարևոր ցուցանիշներից մեկը ներմուծման ծածկույթի ցուցանիշն է: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում այն ունեցել է հետևյալ տեսքը.



**Գծապատկեր 16**

**Ներմուծման ծածկույթի ցուցանիշի դինամիկան ՀՀ-ում 2000–2012 թթ.**

Նկատի ունենանք, որ միջազգային պրակտիկայում զարգացող երկրների համար որպես այս ցուցանիշի ընդունելի սահման է համարվում 3 ամսվա նշագիծը և հիմնականում պետք է պահպանվի հատկապես այն

երկրներում, որոնց մուտքը միջազգային կապիտալի շուկաներ սահմանափակ է: Աղյուսակի տվյալներից երևում է, որ ներմուծման ծածկույթի ցուցանիշը բոլոր տարիներին բարձր է եղել այդ նշագծից, առանձին տարիների կրկնակի գերազանցելով այն: Ամենաբարձր մակարդակին հասել է 2009 թ., երբ ներմուծման ծածկույթը կազմել է 6,5 ամիս, դրանից հետո անընդհատ նվազում է՝ 2012 թ. հասնելով 4,4 ամսվա: Պատճառը Կենտրոնական բանկի իրականացրած ինտերվենցիաների հետևանքով ձևավորված համախառն արտաքին պահուստների նվազումն է ապրանքների և ծառայությունների ներմուծման աճի նկատմամբ:

### Սոցիալական ոլորտ

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը կարևոր դեր է խաղում բնակչությանը սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործում և ծայրահեղ աղքատության դեմ պայքարում: Պետական համակարգի սոցիալական պաշտպանության գործառնություններն հստակորեն սահմանված են օրենքներով ու սահմանադրությամբ, և դրանց հիման վրա համապատասխան ծրագրեր են իրականացվում բնակչության առավել խոցելի խավերի համար: Դրանք են՝

1. սոցիալական օգնության պետական ծրագրերը,
2. սոցիալական ապահովության ծրագրերը,
3. սոցիալական պաշտպանության ծրագրերը,
4. սոցիալական ապահովագրության պետական ծրագրերը,
5. զբաղվածության ծրագրերը,
6. նպաստի ծրագրերը,

Ընդհանուր առմամբ Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը կարելի է բաժանել 2 մասի՝ սոցիալական ապահովագրություն և սոցիալական օգնություն: 2012 թ. սոցիալական համակարգի բարեփոխումները շարունակական բնույթ են կրել:

**Կենսաթոշակային ոլորտ:** Այստեղ բարեփոխումները մտել են նոր փուլ. կենսաթոշակների տեղեկատվական համակարգում ներմուծվել է տվյալների նոր շտեմարան, ստեղծվել են բազմաշերտային կենսաթոշակային համակարգի անցման ենթակառուցվածքներ, աշխատանքներ են կատարվում ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների ամբողջական փաթեթի մատուցման ուղղություններով: Այդ փաթեթները պետք է մշակվեն որպես սոցիալական ծառայություններ, որոնք հաշվի են առնում հաճախորդների պահանջները և հիմնվեն նրանց գնահատումների վրա: Հայաստանում սոցիալական ծառայություններ մատուցելու արդարացիությունը և դրանց հավասար որակ ապահովելը մնում է որպես կարևոր և առաջնային խնդիր:

**Ջրաղվաժուության ծրագիր:** Մշակել և հաստատել է Հայաստանի կառավարությունը: Ծրագրում, մասնավորապես, սահմանափակ հնարավորություններով մարդկանց համար (հաշմանդամներ) ներկայացվել է նոր մարտավարություն: 2012 թ. պետական բյուջեի 29%-ը ուղղվել է սոցիալական պաշտպանության ոլորտին: Սոցիալական ապահովության տարբեր ծրագրերի ֆինանսավորմանը մասնակցել են նաև միջազգային շատ կազմակերպություններ: 2011 թ. համեմատությամբ սոցիալական ապահովության ծախսերը աճել են 13,9%-ով՝ հիմնականում շնորհիվ պետական կազմակերպությունների աշխատակիցներին սոցիալական ապահովության փաթեթ տրամադրելու, նպաստների և դրամական օգնությունների աճի, ինչպես նաև երկրաշարժից հետո անօթևան մնացած մարդկանց բնակարանով ապահովելու նպատակով Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանին տրամադրած վարկի:

Սոցիալական ապահովագրության առավել կարևոր և ծախսատար ուղղությունը կենսաթոշակներն են, գործազրկության նպաստները, ծննդաբերության և մինչև 2 տարեկան խնամքի տակ գտնվող երեխաներին տրվող նպաստները: Թեպետ այս ոլորտում դրամական օգնության գումարներն ավելացել են, սակայն դրանց միջին չափը դեռևս զիջում է Եվրամիության և նախկին ԽՍՀՄ մի քանի երկրների:

**Աղյուսակ 13**

**Միջին աշխատավարձը և կենսաթոշակները ԱՊՀ մի շարք երկրներում և Վրաստանում 2012 թ. (մլն ԱՄՆ դոլար)**

Երկրներ	Միջին աշխատավարձ	Կենսաթոշակ
Բելառուս	447	225
Ղազախստան	749	199
Կիրգիզիա	232	90
Ռուսաստան	962	305
Տաջիկստան	117	38
Ուկրաինա	379	156
<b>Հայաստան</b>	<b>302</b>	<b>74</b>
Վրաստան	464	94
Ադրբեջան	502	185

**Աղքատություն և սոցիալական ինստեգրում:** Տնտեսության կայուն զարգացման, սոցիալական քաղաքականությանը և անհատական օգնության աճին ուղղվող պետական ռեսուրսների ավելացման շնորհիվ 2004 – 2008 թթ. ընթացքում Հայաստանում տեղի ունեցան էական տեղաշարժեր աղքատության և ծայրահեղ աղքատության ոլորտում: Այդ տարիներին ավելի քան 350 հազար մարդ դուրս է եկել աղքատությունից: Աղքատության տե-

սակարար կշիռը 2008 թ. 2004 թ.-ի համեմատ նվազել է 34,6%-ից մինչև 23,5%: Նույն թվականներին ծայրահեղ աղքատությունը նվազել է 6,4%-ից մինչև 3,1%: Ինչ վերաբերում է եկամուտների անհավասարությանը, որը չափվում է Ջինի գործակցով, ապա այն էական փոփոխության չի ենթարկվել՝ 2008 թ. 2004 թ.-ի համեմատ 0.395-ից մինչև 0.389: 1990-ական թվականներին և 2000-ականների սկզբին եկամուտների անհավասարությունը Հայաստանում ամենաբարձրներից մեկն է եղել զարգացման անցումային փուլում գտնվող երկրների մեջ:

Տնտեսական ճգնաժամն առավել սրեց վիճակը: Ինչպես արդեն ցույց ենք տվել աղյուսակ 4-ում՝ հետճգնաժամային տարիներին աղքատության մակարդակի և եկամուտների տարբերական ցուցանիշները վատթարացան՝ ի հեռուկա գրանցված տնտեսական աճի: Աղքատության մակարդակը էականորեն տարբերվում է մարզերում: Տնտեսական աճի ազդեցությունը աղքատության մակարդակի կրճատման վրա մարզերում ևս անհավասարաչափ է եղել:

**Կենսաթոշակային համակարգ:** Կենսաթոշակային տարիքը ապահովագրված տղամարդկանց և կանանց համար 63 տարին է, իսկ սոցիալական կենսաթոշակինը՝ 65: Ներկայիս գործող հաշվարկը հիմնված է միայն աշխատանքային տարիների վրա և կապ չունի աշխատավարձի չափի հետ: Հայաստանում կենսաթոշակի համակարգը ընդգրկում է բնակչության 20%-ը:

Կենսաթոշակների էական բարձրացմամբ հանդերձ՝ միջին կենսաթոշակի չափը բավական ցածր է. 2012 թ. եղել է 74 ԱՄՆ դոլար: Միջին ապահովագրական կենսաթոշակը նվազագույն սպառողական զամբյուղի բյուջեի 2/3-ն է: Թոշակատուների հարաճուն քանակը, համեմատաբար ոչ մեծ հարկատուների թիվը, երկրի մակարդակով ընդհանուր ցածր աշխատավարձը, հարկերից խուսափումը, ծնելիության ցածր մակարդակը, աշխատունակ բնակչության արտագաղթը բացասաբար են ազդում առկա կենսաթոշակային համակարգի վրա: Վերջինիս բարելավման նպատակով կառավարությունը 2006 թ. սկսել է կենսաթոշակային համակարգի բարեփոխման ծրագրերի իրականացում:

**Առողջապահություն:** Առողջապահության ոլորտում կառավարության մարտավարության հիմնական նպատակն է բնակչության սանիտարահիգիենիկ համաճարակային անվտանգության ապահովումը, ինչպես նաև առաջին բժշկական օգնության տրամադրումը, մոր և մանկան առողջության ապահովումը, այդ թվում նաև անվտանգ, արդյունավետ և բարորակ դեղորայքով ապահովելը:

2012 թ. պետական բյուջեից առողջապահության ոլորտին տրամադրվել է 64.5 մլրդ դրամ, ինչը ապահովել է ծրագրերի իրականացման 96,2%-ը: Ծրագրերի ֆինանսավորման մնացած մասը իրականացվել է դրսից

օգնության շնորհիվ: Տրամադրված ծախսերից 41,2%-ը օգտագործվել է ստացիոնար օգնության համար, 35,9%-ը՝ ամբուլատոր, 11,4%-ը՝ տարբեր ծրագրերի իրականացման համար, 5,9%-ը ծախսվել է դեղորայքի, սարքավորումների, գործիքների ձեռքբերման վրա, 4,8%-ը՝ ֆինանսավորել է հասարակական առողջապահության ծառայությունները: 2012 թ. 2011 թ.-ի համեմատությամբ ծախսերը ավելացել են 1,9%-ով:

**Կրթություն:** Պետական բյուջեից կրթության ոլորտ ուղղված ծախսերը 2012 թ. կազմել են 255.8 մլն ԱՄՆ դոլար՝ ապահովելով ծրագրերի իրականացման 98,7%-ը: 2011 թ. համեմատ կրթության ոլորտում կատարված ծախսերը նվազել են 3,1%-ով: Կրթության համար հատկացվող պետական ռեսուրսների կրճատումը, տնային տնտեսությունների եկամուտների անհամաչափ բաշխվածությունը և կրթության ոլորտում ծախսերի անհավասարաչափ հնարավորությունները վտանգի տակ դրեցին կրթությունից օգտվելու հավասարության իրավունքը: Որակյալ կրթությունից օգտվելու հասանելիությունը աղքատների ու հարուստների, գյուղական ու քաղաքային բնակավայրերի միջև տարբեր է, և այդ տարբերությունը գնալով ավելի զգալի է դառնում:

### **Բնակչության քանակ: Զբաղվածություն և գործազրկություն**

**Բնակչության քանակ:** 2011 թ. Հայաստանի բնակչության մարդահամարի արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանի բնակչության աճը նշանակալի է եղել հենց Խորհրդային Միության կազմում: Եթե ընդհանուր առմամբ ամբողջ Միությունում 1987 թ. բնակչությունը 1940 թ. համեմատ աճել էր 45 տոկոսով, ապա Հայաստանում՝ 2.6 անգամ:

Խորհրդային Հայաստանն առանձնանում էր ծնելիության բարձր և մահացության համեմատաբար ցածր մակարդակներով: Հայաստանի բնակչությունն ավելացել էր նաև սփյուռքահայերի հայրենադարձության և հարևան երկու երկրներից հայերի ներհոսքի հաշվին: Մոտավոր հաշվարկներով՝ 1959 և 1979 թվականների մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում Ադրբեյջանի և Վրաստանի 400 հազար հայ դարձել է Հայաստանի քաղաքացի: Եթե, ըստ 1926 թվականի մարդահամարի, Խորհրդային Միության հայերի միայն 47.7 տոկոսն էր ապրում Հայաստանում, ապա, ըստ 1979 թվականի մարդահամարի, գրեթե 66 տոկոսը: Բնութագրական է, որ աշխատանքային ռեսուրսների հսկայական ներհոսքի պայմաններում բացառվում էր գործազրկությունը: Այսպես, աշխատողների և ծառայողների թիվը ԽՍՀՄ-ում 1987 թ. 1940 թ.-ի համեմատ աճել էր 3.5 անգամ, իսկ մեր հանրապետությունում՝ 9.3 անգամ: Հայաստանն առանձնանում էր նաև արդյունաբերականացման առավել բարձր տեմպերով, քաղաքային բնակչության



թվի աճով: Միաժամանակ, ստեղծվում էին նոր արդյունաբերական համալիրներ՝ գրեթե բոլոր շրջկենտրոնները վերածելով քաղաքների: Հայաստանը տարբերվում էր գիտատեխնիկական առաջընթացը որոշող արդյունաբերական ճյուղերի առաջանցիկ զարգացմամբ:

Աղյուսակ 14

Հայաստանի բնակչության քանակի փոփոխության դինամիկան՝ ըստ մարդահամարների տվյալների, 1926–2011 թթ.

Մշտական բնակչության քանակը, հազ. մարդ				
Տարիներ	Ամբողջ բնակչությունը	յուսիսի մեծություն	Քաղաքային, %	Գյուղական, %
1926	881,3		167,1 19.0	714,2 81.0
1939	1282,3		366,4 28.6	915,9 71.4
1959	1763		881,8 50.0	881,2 50.0
1970	2491,9		1481,5 59.5	1010,4 40.5
1979	3030,7		1992,5 65.7	1038,2 34.3
1989	3448,6		2368,5 68.7	1080,1 31.3
2001	3213,0		2066,1 64.3	1146,9 35.7
2011	3018,9		1911,3 63.3	1107,6 36.7

Աղբյուր: ԱՎԾ 2012 թ. տարեգիրք

Այս բոլոր ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական աննախադեպ ձեռքբերումները ի չիք դարձան անկախության առաջին տարիներին, ինչի մասին վկայում է քաղաքային բնակչության քանակի կտրուկ նվազումը: Հատկապես տուժեցին աղետի գոտի համարվող քաղաքները և նոր արդյունաբերական կենտրոնները: Բացառությամբ Երևան քաղաքի, որտեղ բնակչության թիվը պահպանվեց 1.0–1.1 միլիոնի սահմաններում, մյուս քաղաքներում բնակչության թիվը կրկնակի նվազեց: 2001 և 2011 թթ. մարդահամարի արդյունքների հիման վրա պարզ է դառնում, որ երկիրը կորցրել է 320 հազ. քաղաքացիների՝ ըստ մշտական բնակչության ցուցանիշի, և 257 հազար մարդ՝ ըստ առկա բնակչության ցուցանիշի:

Ստիպված ենք արձահագրել, որ աշխատուժի արտագաղթին շատ դեպքերում վերաբերվում են որպես փրկության օղակի, որը մեղմում է ներքին աշխատաշուկայի լարվածությունը և մեծացնում նորաստեղծ սվյուտքի ֆինանսական միջոցների ներհոսքը: Այսպիսի քաղաքականությունը, ապա-


հովելով ժամանակավոր արդյունք, հեռանկարում հղի է անկանխատեսելի հետևանքներով, ազգային անվտանգությանը սպառնացող վտանգներով:

**Ջրադրվածություն և գործազրկություն:** Անկախացումից ի վեր Հայաստանի աշխատաշուկան մի շարք փուլեր է անցել 1990-ականների սկզբի համակարգային ճգնաժամ, տնտեսական և սոցիալական բարեփոխումներ՝ ավելի քան տասնամյա տևողությամբ, 1990-ականների կեսից մինչև 2008 թ. անընդհատ տնտեսական աճ (մինչ վերջին ճգնաժամը, ինչը հանգեցրեց աճի դանդաղեցմանը, այնուհետև՝ տնտեսության անկմանը): Սակայն, իրական գործազրկության մակարդակը մշտապես մնացել է երկնիշ. միջինում տնտեսապես ակտիվ չորս բնակիչներից մեկը գործազուրկ է եղել:

2012 թ. պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.1 տոկոսով և դարձել 17.3 տոկոս:

2012 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը 2011 թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 9.1 տոկոսով: Միջին ամսական աշխատավարձը պետական և ոչ պետական ոլորտներում համապատասխանաբար եղել է 242.7 և 370.6 դոլար, իսկ միջին աշխատավարձը՝ 302 դոլար: Սակայն աշխատանքի վարձատրության տարբերություններն ըստ տնտեսական գործունեության տեսակների, տնտեսության ճյուղերի և ըստ սեռերի, շարունակում են նշանակալից լինել:

Ճյուղային զբաղվածության դինամիկան ցույց է տալիս արդյունաբերության մեջ զբաղվածների կշռի աճ, իսկ գյուղատնտեսության մեջ՝ կայունացում (գծապատկեր 17): Ինչպես տեսնում ենք գծապատկերից, զբաղվածների կեսից ավելին կախված են ցածր արտադրողականության գյուղատնտեսությունից (38.9 տոկոս) և առևտրից (11.4 տոկոս) ստացած եկամուտներից:



Գծապատկեր 17

ՀՀ-ում զբաղվածության կառուցվածքը ըստ ճյուղերի, %

Պետք է նշել, որ զբաղվածության կառուցվածքն ըստ տնտեսական ակտիվության ոլորտների պակաս բազմազան է դարձել, առավել զգայուն է ներքին ու արտաքին ցնցումների հանդեպ: Բնատնտեսությունը գյուղատնտեսության մեջ եղել է անցումային շրջանի ցնցումների կայունացման, ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծմանն ուղղված քաղաքականության բացակայության փոխհատուցման առանցքային գործոն: Բնատնտեսությամբ զբաղվածների բաժինը ընդհանուր զբաղվածների թվում նախկինի պես բարձր է (39 տոկոս), որի շնորհիվ գյուղական վայրերում զբաղվածությունն ավելի բարձր է, քան քաղաքներում: Մյուս կողմից՝ գյուղատնտեսության մեջ զբաղվածների մեջ քիչ չեն չգրանցված ֆերմերները, որոնք համագործակցում են մանր ձեռնարկատերերի հետ և համակերպվում են սեզոնային տատանումներին և աշխատանքային ցածր եկամուտներին: Թեև այս ոլորտում աշխատատեղերը աղքատության նվազեցման տեսանկյունից բնավ հեռանկարային չեն, այնուամենայնիվ, դրանք գյուղական բնակչության համար շարունակում են մնալ եկամտի հիմնական աղբյուր, քանի որ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը Երևան քաղաքի սահմաններից դուրս սահմանափակ է: Այս վիճակի հիմնական պատճառը այլընտրանքային զբաղվածության բացակայությունն է՝ հատկապես գյուղական վայրերում: Սովերայնությունը Հայաստանի աշխատաշուկայի մեկ այլ խնդիրն է. ոչ ձևայնացած հատվածում զբաղվածությունը հիմնականում կրում է պատահական բնույթ, հիմնված է անհատական և սոցիալական կապերի, այլ ոչ պայմանագրային հիմունքների վրա: Ոչ ձևայնացած զբաղվածությունը սովորաբար ցածր է վարձատրվում, անկայուն է և խնդիրներ է ստեղծում հետագայում: Այդ հատվածում զբաղվածների սոցիալական նպաստներ չի հաշվարկվում:


### **Մակրոտնտեսական իրավիճակը 2012 թվականին (ամփոփում) և 2013 թվականի զարգացման միտումները**

Քանի որ ԱՎԾ 2013 թ. տարեգիրքը հրատարակված չէ և 2012 թ. մակրոտնտեսական շատ ցուցանիշներ չեն ամփոփվել, ուստի 2012 թ. մակրոտնտեսական իրավիճակի փոփոխությունները քննարկենք հիմնականում հավելված 1-ի տվյալներով:

2012 թ. արդյունքներով Հայաստանի տնտեսությունը իրական արտահայտությամբ աճել է 7,2%-ով: Միջինից ավելի բարձր տեմպերով աճ է գրանցվել արդյունաբերության մեջ (8,8%), գյուղատնտեսությունում (9,5%) և ծառայությունների ոլորտում (10,8%): Աճի այսպիսի բարձր տեմպերը բացատրվում են մի քանի գործոններով՝ ներքին սպառողական պահանջարկի վերականգնում, հանքարդյունաբերության արտադրանքի նկատմամբ պա-

հանջարկի ավելացում, գյուղատնտեսության համար բնակլիմայական բարենպաստ պայմաններ և ցածր բազայի էֆեկտ:

Վերջինս պայմանավորված էր տնտեսական ճգնաժամի ընթացքում արձանագրված խորը անկմամբ: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 18-ի տվյալներից՝ 2009 թ. անկումից հետո հետագա տարիներին տեղի է ունենում վերականգնողական աճ: Դոլարային արտահայտությամբ ՀՆԱ ծավալը 2012 թ. 2008 թ.-ի մակարդակի 85%-ն էր:



Գծ. 18

**ՀՆԱ և արտադրության ծավալների դինամիկան ըստ ճյուղերի (%-ով նախորդ տարվա համեմատ)**

Գծ. 19

**ՀՀ պետական ֆինանսներ (%-ով նախորդ տարվա համեմատ)**

Ներքին պահանջարկը ձևավորող բոլոր տարրերի դրական դինամիկան, բացառությամբ պետական ծախսերի, խթանել են սպառումը: Մասնավոր սպառում/ՀՆԱ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ աճել է 5 տոկոսային կետով, այնինչ պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կրճատվել է 0,8 տոկոսային կետով: Պաշտոնական և մասնավոր տրանսֆերտներն ու գործուսային եկամուտները եղել են 1,3 մլրդ դոլար, որը նախորդ տարվա մակարդակին է, իսկ դրամական փոխանցումները գնահատվում են 1,4 մլրդ դոլլար, որը գերազանցում է նախաճգնաժամային մակարդակը:

Բանկային վարկավորումը ավելացել է 26,6%-ով, որի մեծ մասը սպառողական վարկեր են: Դոլարային արտահայտությամբ՝ ապրանքների ար-

տահանումն աճել է 5,4%-ով և գերազանցել է ներմուծման աճին (2,2%), ինչը դրական ներգործություն է ունեցել արդյունաբերության ցուցանիշների վրա: Բացասական միտումը ներդրումների կրճատումն է 4 տոկոսային կետով:

Ընթացիկ գործառնությունների հաշվի պակասուրդի կրճատումը 51,8 մլն դոլարով պայմանավորված է ապրանքային հաշվեկշռի բարելավմամբ: Այնուամենայնիվ, ընթացիկ գործառնությունների հաշվի 9,5 տոկոսանոց բարելավումը չէր կարող փոխհատուցել ֆինանսական գործառնությունների հաշվի 47%-անոց կրճատումը, որը հետևանք էր օտարերկրյա ուղղակի ներդրումների 325 մլն դոլարով կրճատման և առևտրային բանկերի արտաքին փոխառությունների աճի: Դրա հետևանքով վճարային հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ կազմեց -10,7%, կրճատվեցին ԿԲ պահուստները, իսկ արտաքին պարտքը աճեց 170 մլն դոլարով:

ՀՆԱ-ի բարձր տեմպերով աճը և կառավարության նպատակաուղղված քաղաքականությունը դրական ազդեցություն են գործել ֆիսկալ ոլորտի վրա: Պետական բյուջեի եկամուտներն ու ծախսերը աճել են համեմատաբար չափավոր և հաշվեկշռված: Եկամուտների հավաքագրման ծավալների ավելացման (6,9%) գերազանցումը ծախսերի ծավալների ավելացմանը (1,8%) նպաստել է բյուջեի պակասուրդի կրճատմանը, որի հարաբերակցությունը ՀՆԱ-ին նախորդ տարվա 2,8%-ից իջել է 1,5%-ի: Հարկերի հավաքագրման մակարդակը ամենաբարձրն է նախորդ բոլոր տարիների համեմատ՝ 24,0%:

2013 թ. հունվար-հունիս ամիսներին տնտեսության վերականգնման միտումները պահպանվեցին: Մինչև մայիս տնտեսական ակտիվության ցուցանիշը տատանվում էր 7–9%-ի սահմաններում (հետագա բոլոր տվյալները վերցված են «Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար–հունիսին» և «Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար–հունիսին» ԱՎԾ հրապարակումներից): Սակայն հունիսին այն կտրուկ նվազեց և հունվար–հունիսի համար դարձավ 4,4%: Դա պայմանավորված էր մայիսին և հունիսին ՏԱՑ կտրուկ նվազմամբ՝ մայիսին այն կրճատվեց 1,3%-ով, իսկ հունիսին աճեց ընդամենը 1,3%: Առաջին եռամսյակի բարձր տեմպերը բացատրվում էին արդյունաբերության աճի բացառիկ բարձր տեմպերով (15,8%), որը երկրորդ կիսամյակում շեշտակիորեն իջավ: Հունվար–հունիսի միջին ցուցանիշը 8,3%-ն էր նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի: Արդյունաբերության բարձր տեմպեր ապահովել են հանքագործական արդյունաբերությունը, մշակող արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են՝ խմիչքների, ծխախոտի, դեղագործական արտադրանքի, պատրաստի մետաղյա և ոսկերչական արտադրատեսակների արտադրությունները: Որոշ ճյուղեր, ընդհակառակը, կասեցրել են աճի տեմպերը՝ մանածագործություն, պոլիգրաֆիական գործունեություն, ռետինե և պլաստմա-

սայի արտադրատեսակների, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների, մեքենաների և սարքերի արտադրություն: Ավելի համեստ են գյուղատնտեսության աճի տեմպերը՝ 2,1%: Շարունակվում է շինարարության ճյուղի անկումը, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կրճատվել է 42,6%-ով: Առևտրի և ծառայությունների ոլորտը պահպանել է նախկին աճի տեմպը՝ 3,5%, թեև երկրորդ եռամսյակում դիտվում է խիստ անկում (1,1%) առաջին եռամսյակի համեմատ (6,5%):

Կիսամյակի տնտեսական աճի կարևոր գործոններից են արտաքին ապրանքաշրջանառության ցուցանիշների բարելավումը: Նախորդ համապատասխան ժամանակաշրջանի համեմատ արտահանումը ավելացել է 2,2%-ով, իսկ ներմուծումը կրճատվել է 2,3%-ով: Արդյունքում, ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալների 30,9 մլն դոլար կրճատմամբ հանդերձ առևտրային հաշվեկշռի պակասուրդը նվազել է 4,7 տոկոսով: Տարվա ընթացքում այսպիսի տեմպերի պահպանման դեպքում կարելի է խոսել տնտեսության կառուցվածքային բարելավման հնարավորությունների մասին:

Ընդհանուր առմամբ, համաշխարհային, մասնավորապես՝ եվրոպական տնտեսության պահպանվող թուլության կոնտեքստում (2011 թ. Հայաստանի արտահանման 45%-ը բաժին էր ընկնում ԵՄ երկրներին) կարելի է սպասել տնտեսական աճի տեմպերի նվազում: Հաշվի առնելով I և II եռամսյակների տնտեսական ցուցանիշների համադրումները և դրանց արդյունքում նկատվող դանդաղեցման միտումները, մեր կարծիքով, ավելի իրատեսական են ԱՄՀ, ՀԲ և ՎՋԵԲ կոնսենսուս-կանխատեսմամբ 2013 թ. Հայաստանի համար հաշվարկված 4,6% տնտեսական աճը (Կառավարությունը նախատեսել է 6,2%): Տնտեսության աճի դանդաղումը կարող է պայմանավորվել մետաղների և հանքաքարի միջազգային գների անկումով: 2011 թ. այս ապրանքախմբերը կազմել են արտահանման 47%-ն են: Տնտեսության թուլացման միտումներ են նկատվում նաև Ռուսաստանի Դաշնությունում, որը դրամական փոխանցումների և ուղղակի օտարերկրյա ներդրումների հիմնական աղբյուրն է: Համապատասխանաբար, գոյություն ունի ներքին պահանջարկի թուլացման լրացուցիչ ռիսկ, ինչպես սպառողական՝ պայմանավորված դրամական փոխանցումներով, այնպես էլ ներդրումային, որը ճգնաժամից հետո մնում է ցածր մակարդակի վրա:

ՀՆԱ աճի տեմպերի դանդաղումը և արտահանման գների նվազումը կարող է ազդել արդյունաբերության արտահանող ճյուղերի վրա, դա էլ, իր հերթին արտահանման և ֆիսկալ եկամուտներ վրա՝ խախտելով, վերջին հաշվով, մակրոտնտեսական կայունությունը: Վճարային հաշվեկշռի պակասուրդի վատթարացումը կարող է լինել սահմանափակ, սակայն կարող է ճնշել դրամի կուրսին՝ իջեցման ուղղությամբ: Նախորդ տարիներին ԱՄՀ-ի հետ համագործակցության շրջանակներում կառավարությունը հաջողու-

թյամբ իրականացնում է հարկային վարչարարության բարելավումներ և ծախսերի օպտիմալացում: Բյուջեի պակասուրդը 2013 թ. համար պլանավորված է 2,6% ՀՆԱ-ի նկատմամբ: ԿԲ-ը չի նախատեսում դրամի առաջարկի խթանում, և դրամի գանգվածի տեմպը կլինի չափավոր: Ինֆլյացիայի տեմպը նույնպես չի գերազանցի նախատեսված միջանցքը (4% +1,5%): Որոշ չափով ինֆլյացիայի տեմպերի արագացում կարող է տեղի ունենալ սպառողական ապրանքների և ծառայությունների ոլորտում՝ կապված էներգակիրների թանկացման և բնակլիմայական պայմաններով պայմանավորված բերքատվության մակարդակի հետ:

Հայաստանի կառավարությունը ուշադրության կենտրոնում է պահում գնահատող (ոեյտինգային) կենտրոնների հրապարակումները՝ հետևելով դրանցում Հայաստանի դիրքի փոփոխությունների միտումները: Ինչպես նշել ենք, ըստ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի 2012–2013թթ. «Doing Business» գնահատականի՝ Հայաստանը գրավում է 32-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ բարձրանալով 18 կետով: Նոր գնահատման ցանկում Հայաստանը տեղ է գտել Նիդերլանդների և Բելգիայի միջև՝ առաջ անցնելով այնպիսի երկրներից, ինչպիսիք են Ֆրանսիան (34) և Իսրայելը (38): Սա, իհարկե, բավական բարձր ցուցանիշ է, սակայն խնդիր է դրված առավել առաջխաղացման և Հայաստանի դիրքերի ամրապնդման: «Fitch Ratings» միջազգային գնահատման գործակալությունը 2012 թ. հաստատել է Հայաստանի արտասահմանյան և ազգային արժույթների երկարաժամկետ դեֆոլտային էմիտենտը BB-մակարդակում, ինչը նշանակում է «հաստատուն» կանխատեսման գնահատական: Գործակալության «Sovereign Review and Outlook» զեկույցում նշվում է, որ Հայաստանը շարունակում է մնալ խոցելի արտաքին ճնշումների նկատմամբ: 2013 թ. համաշխարհային մրցունակության զեկույցում Հայաստանը բարելավել է իր դիրքը 3 կետով:

## **ՀՀ տնտեսության զարգացման հեռանկարները և ռիսկերը**

### *ՀՀ կայուն զարգացման ծրագիրը*

2008 թ. ընդունված Հայաստանի Հանրապետության Կայուն զարգացման ծրագիրը (ԿԶԾ), որ ընդգրկում է 2009–2011 թթ., փոխարինեց աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին և հաստատեց, որ բնակչության բարեկեցության աճը և աղքատության կրճատումը, ներառյալ չքավորության իսպառ վերացումը, տնտեսության կայուն զարգացում ապահովող ծրագրի հիմնական նպատակներից են: Առաջադրված նպատակի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ աղքատությունը հանգեց-

նում է ըստ եկամուտների բնակչության խիստ բևեռացման և վտանգում է երկրում սոցիալական կայունությունը, խոչընդոտ է երկրի երկարաժամկետ տնտեսական զարգացման և արտաքին տնտեսական համագործակցության ճանապարհին: ԿԶԾ-ն նախատեսում է մինչ 2021 թ. աղքատությունը հասցնել 6.8 տոկոսի, դրանով իսկ նշանակալիորեն հաղթահարել այն, իսկ ծայրահեղ աղքատությունը հասցնել մինչև 1.2 տոկոսի, դրանով իսկ լուծում տալով խնդրին: Ինչպես և ենթադրվում էր, Հայաստանը, գտնվելով մարդկային ներուժի միջին զարգացվածություն ունեցող երկրների կազմում, 3–4 տարիների ընթացքում կանցնի մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների խումբը:

ԿԶԾ-ի ռազմավարությունը բաղկացած է երեք հիմնական առաջնային ուղղություններից՝ կայուն և արագ տնտեսական աճի ապահովում, սոցիալական և եկամտային հասցեական քաղաքականության իրականացում բնակչության խոցելի և ակտիվ խմբերի համար (այդ թվում՝ աղքատների), պետական կառավարման արդիականացում, ներառյալ կառավարման արդյունավետության բարձրացում և պետության տրամադրության տակ ռեսուրսների փաթեթի առաջընթաց աճի ապահովում: Բացի դրանից ԿԶԾ-ում տնտեսական ռազմավարության առաջնահերթ ուղղություններ են համարվում 1) արտահանման խթանումը և համաշխարհային տնտեսական համակարգում ներգրավվածության աստիճանի բարձրացումը, ներառյալ Եվրամիությանը (ԵՄ) ինտեգրման և Եվրոպական քաղաքականության հետ հարևանության ինտենսիֆիկացումը, այդ թվում՝ ԵՄ-ի հետ ազատ առևտրի ռեժիմի ստեղծումը և վիզային ռեժիմի միակողմանի պարզեցումը, 2) տնտեսական ինստիտուտների և երկրի օրենսդրության՝ ԵՄ-ի պահանջներին և ստանդարտներին համապատասխանեցման ինտենսիֆիկացումը:

2013 թ.-ի մայիսի 16-ին ՀՀ կառավարության ընդունած ծրագիրը (ծրագիր N515-Ա) ուղղված է արդյունավետ և անվտանգ պետություն ստեղծելուն: Ծրագրում առանձնացված են կառավարության հինգ ուղղությունները՝ անկախ և անվտանգ Հայաստան, արդար պարզևատրության ապահովում և նոր աշխատատեղերի ստեղծում, ազատ և արդար Հայաստան, մարդկային կապիտալ, ենթակառուցվածքային զարգացում:

Ծրագիրը հաշվի է առնում արտաքին աշխարհի անորոշությունը, ինչը սահմանափակում է արտաքին ռեսուրսների հնարավոր ներհոսքը, հետևաբար՝ առաջիկա չորս տարիներին ներքին ռեսուրսներով պայմանավորված զարգացումը առաջնակարգ նշանակություն կունենա Հայաստանի տնտեսական աճի համար (ընդոծին տնտեսական աճի քաղաքականություն): Ըստ ծրագրի՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության դեպքում, ինչը ենթադրում է ներքին ռեսուրսների համաձայնեցված և արդյունավետ օգտագործում, ակնկալվում է արտահանման ծավալների աճ:



Ծրագրի իրականացման համար Հայաստանի կառավարությունը 2013–2017 թթ. նախատեսում է իրականացնել հետևյալ նպատակները.

- զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի տեմպի արագացում, ապահովելով տարեկան ՀՆԱ-ի 5–7 տոկոս աճի մակարդակ,
- ներմուծման աճի նկատմամբ արտահանման աճի տեմպի արագացման ապահովում,
- նվազագույն աշխատավարձի առնվազն կրկնակի ավելացում,
- ծնելիության ամբողջական աճը 1.8-ի հասցնելը,
- 100,000 նոր աշխատատեղերի ստեղծում:

Ծրագրում առանձին նշված են արտաքին հարաբերությունների ուղղությունները: Դրանք են, մասնավորապես՝

- Ռուսաստանի հետ միութենական և ռազմավարական համագործակցության ամրապնդումը,
- ԱՄՆ-ի հետ բարեկամական համագործակցության զարգացումը և ընդլայնումը,
- ԵՄ-ի հետ մերձեցման քաղաքականության շարունակումը, եվրոպական երկրների հետ հարաբերությունների հետագա ամրապնդումը,
- հարևան երկրների, Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունների զարգացում,
- առանց նախապայմանների՝ հայ-թուրքական հարաբերությունների քաղաքական կարգավորման կուրսի շարունակումը,
- ԱՊՀ երկրների հետ ինտեգրացիոն գործընթացներին ակտիվ մասնակցության շարունակումը՝ խորացնելով ԱՊՀ երկրների հետ համագործակցությունը և ձևավորված ավանդական կապերը:

Հայաստանի Հանրապետությունը կշարունակի Կոլեկտիվ անվտանգության պայմանագրին իր ակտիվ մասնակցությունը, որը իր ռազմական անվտանգության կարևորագույն բաղադրիչն է:

***Միջազգային ինտեգրումը և արտաքին փոփոխական քաղաքականությունը***

Ներկայումս արտաքին շուկաներ Հայաստանի ելքի ճանապարհին կան տեղեկատվական, արտադրական, ենթակառուցվածքային և կադրային խոչընդոտներ, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է օգտագործել արտաքին առևտրի կարգավորման բոլոր հնարավոր միջոցները, համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու բոլոր հնարավորությունները, որոնք թույլ կտան հայ արտադրողներին ունենալ մասշտաբի էֆեկտ:

Հայաստանի կառավարությունը, մասնավորապես՝

- կշարունակի ակտիվ համագործակցել ԱՊՀ անդամ երկրների հետ, անհրաժեշտ քայլեր կձեռնարկի մի շարք անդամ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման բազմակողմ համաձայնագրի իրականացման համար,
- կշարունակի համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության հետ, որպեսզի ապահովի տնտեսական ինտեգրման ավելի բարձր մակարդակ,
- կշարունակի Եվրոպական ինտեգրման ուղղությամբ աշխատանքները,
- տարածաշրջանի գործընկեր երկրների հետ կակտիվացնի համագործակցությունը՝ ապահովելով դեպի այդ երկրներ հայկական արտադրանքի մուտքի ավելի բարենպաստ պայմաններ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կշարունակի համապատասխան իրավական հիմքի ստեղծման աշխատանքները միջազգային տնտեսական համագործակցության և Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդման և բարձրացման համար, ինչպես նաև Ֆդեպի ծով ելք չունեցող երկրների համար տրանզիտային ելքի նպատակով՝ միջազգային համակարգին համագործակցելու համար:

***ՀՀ կառավարության ծրագրի իրականացման արդարքին ռիսկերը***

Ներկայումս, ինչպես վկայում են համաշխարհային տնտեսությունում կատարվող գործընթացները, Եվրոպայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում դեռևս չեն կարողանում գտնել խորքային խնդիրների լուծման մեկ միասնական ճշմարիտ հիմքը: Ինչ վերաբերում է այլ երկրներին, ապա հիմնական ռիսկերն ածանցյալ են վերոհիշյալ երկրների և ԵՄ-ի հնարավոր զարգացման բացասական սցենարներից:

Մասնավորապես, նշվում է, որ համաշխարհային տնտեսական աճի բացասական միտումները կարող են անդրադառնալ Հայաստանի տնտեսության վրա հետևյալ եղանակներից մեկի միջոցով.

- գործընկեր երկրների տնտեսական աճի դանդաղեցման տեմպերը Հայաստանի վրա կազդի արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև մետաղի գնի շարունակական նվազմամբ, ինչը կհանգեցնի Հայաստանի արտահանման աճի դանդաղեցմանը, նվազեցնելով ՀՆԱ-ի աճի տեմպերը,
- Ռուսաստանի տնտեսական աճը կարող է դանդաղել՝ կախված համաշխարհային տնտեսությունում բացասական երևույթներից: Դեպի Հայաստան կապիտալ ներդրումների հոսքի արդյունքում գործոնային եկամուտները և դրամական փոխանցումները կնվազեն, ինչը կհանգեցնի ՀՆԱ-ի աճի տեմպերի ավելի ցածր մակարդակի, քան ներկայացված է ծրագրում,

- միջնաժամկետ հեռանկարում ներմուծվող էներգակիրների գների հնարավոր աճը կհանգեցնի Հայաստանի գործարար շրջանների ծախսերի աճին, ինչը զսպող գործոն կլինի թողարկման և, հետևաբար, ՀՆԱ-ի աճի տեմպի համար:

Այս ռիսկերի նյութականացումը և ՀՆԱ-ի նպատակային ցուցանիշից ավելի ցածր մակարդակի ձևավորումը կհանգեցնի ծրագրի նպատակային ցուցանիշների ապահովման համար նախատեսված կառավարության ռեսուրսների կրճատմանը:

2011 թ. դեկտեմբերի 15-ին Հայաստանի կառավարության նիստում N 47 որոշումով հաստատվեց «Հայաստանի Հանրապետության արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարությունը: Այս ռազմավարությամբ արդյունաբերական քաղաքականության անմիջական նպատակ է դառնում ճյուղերի և վերամշակող արդյունաբերության համալիրների զարգացումը:

Տնտեսական մրցունակության և տնտեսական աճի անընդհատության ապահովման հրամայականներից ելնելով՝ կառավարությունը սկսել է արդյունաբերական քաղաքականության իրականացումը՝ ուղղված տնտեսության արտահանման ոլորտի ընդլայնմանը, արտահանման ներուժի բացահայտմանը և արդյունավետ օգտագործմանը: ՀՀ կառավարությունը երկարաժամկետ ռազմավարական նպատակ է ընդունում գիտելիքահեն տնտեսության կառուցումը:

**Աղյուսակ 15**

**Արդյունաբերական արտահանմանն ուղղված քաղաքականության նպատակները**

<i>Ենթանպատակ</i>	<i>Ցուցանիշ</i>	<i>2010 թ.</i>	<i>2015 թ.</i>	<i>2020 թ.</i>
Տնտեսության արտահանման ոլորտի ընդլայնում	Արտահանում/ՀՆԱ, % Արտահանման ծավալը, մլն դոլլար	11%	16%	19%
Տնտեսության արտահանման ոլորտի դիվերսիֆիկացում	Ապրանքների արտահանման ծավալը առանց հանքային մետաղների և ալմաստի	385	700–900	1.300–1.500
Հայկական արտադրանքի մրցունակության բարձրացում	Արտադրողականության իրական աճը մշակող արդյունաբերության մեջ (մեկաշխատողի հաշվով ավելացված արժեքը) %		5%	4%

Ռազմավարության մեջ կոնկրետացված են այն ցուցանիշները, որոնց կառավարությունը նախատեսում է հասնել մինչ 2020 թ.: Մասնավորապես՝ մինչ 2015 թ. սպասվում է արտահանման ծավալների կրկնապատկում, իսկ

մինչ 2020 թ. այդ ցուցանիշը մինչև 3 միլիարդ ԱՄՆ դոլարի հասցնելը: Աղյուսակ 15-ում ներկայացված են արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության (երկարաժամկետ և միջնաժամկետ) նպատակները:

Արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը կիրականացվի մեքենաշինական, դեղագործական և կոնյակի ճյուղային ռազմավարություններում՝ ըստ երեք հորիզոնականի՝ գոյություն ունեցող ներուժի մասշտաբային ընդլայնումը (2011–2013 թթ.), ձևավորվող հնարավորությունների/ճյուղերի զարգացումը (2011–2015 թթ.) և աճի նոր շարժիչներ (2011–2020 թթ.)՝ ճյուղային այլ ռազմավարությունների մշակման աշխատանքների իրականացմանը զուգահեռ:

## ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ՆԵՐՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Տնտեսական աճի ապահովումն ամեն մի երկրի տնտեսական համակարգի արդյունավետության բնութագիրն է: Տնտեսական աճի տեմպի մակարդակից կախված՝ ընդունվում են որոշումներ, որոնք ազդեցություն են ունենում ինչպես ներկա վիճակի, այնպես էլ ապագայում տնտեսական սուբյեկտների սպասումների վրա: Տնտեսական աճի ապահովման ուղիները տարբեր տնտեսություններում տարբեր են: Սակայն կա մեկ ընդհանուր ձևակերպում՝ տնտեսության աճի ապահովում ներքին և արտաքին գործոնների միջոցով: Երկու խումբ գործոններն էլ կարևոր են, սակայն, կապված նրանից, թե տվյալ երկիրն ի՞նչ կշիռ ունի միջազգային ասպարեզում, կառավարությունն ի՞նչ խնդիրներ է դնում տնտեսական համակարգի առջև, ինչպիսի՞ արտաքին աշխարհաքաղաքական վիճակ է բնորոշ, ըստ այդմ տնտեսական քաղաքականության իրականացման տարբեր փուլերում կարևորվում է այս գործոններից մեկը կամ մյուսը, ինչպես նաև, հնարավոր է, դրանց համադրումը: ՀՀ տնտեսական վիճակը դիտարկելիս՝ հասկանում ենք, որ տնտեսական քաղաքականության տեսանկյունից նպատակահարմար է որոնել տնտեսական աճի ապահովման հատկապես ներքին գործոնները: Հաշվի առնելով արտագաղթը՝ ներքին գործոնների շրջանակում անհրաժեշտություն կա բացահայտելու հատկապես աշխատուժի և մարդկային կապիտալի աճի տեմպի դերը տնտեսական աճի ապահովման մեջ: Մտահոգիչ է այն հարցը, թե արդյոք Հայաստանի մարդկային ռեսուրսներն այնքան են նվազել, որ դրանք արդեն ոչ թե դրական են ազդում տնտեսական աճի վրա, այլ բացասական կամ ընդհանրապես չեն ազդում: Հաջորդ կարևոր գործոնը, որն առաջարկվում է դիտարկել, ՀՀ համախառն կապիտալի կուտակման աճի տեմպն է: Սա այնպիսի գործոն է, որը նկարագրում է ՀՀ տնտեսական աճի ապահովման ներկա և հնարավոր ապագա մակարդակը: Հաշվի առնելով վերն ասվածը՝ առաջարկվում է դիտարկել հետևյալ էկոնոմետրիկ մոդելը.

$$q_t = \alpha_0 + \alpha_1 m_t + \alpha_2 h_t + \alpha_3 l_t + \varepsilon_t, \quad (1)$$

որտեղ՝

$q_t$  - ն տնտեսական աճի կամ իրական ՀՆԱ-ի աճի տեմպն է  $t$ -րդ եռամսյակում,

$m_t$  - ն համախառն կապիտալի կուտակման աճի տեմպն է  $t$ -րդ եռամսյակում,

$h_t$  - ն մարդկային կապիտալի աճի տեմպն է  $t$ -րդ եռամսյակում,

$l_t$  -ն աշխատուժի աճի տեմպն է  $t$ -րդ եռամսյակում,  
 $\alpha_1, \alpha_2, \alpha_3$  - ը էկոնոմետրիկ մոդելի անհայտ պարամետրերն են,  
 $\varepsilon_t$  -ն մոդելի պատահական սխալն է  $t$ -րդ եռամսյակում,  
 $t$ -ն, ինչպես կարելի էր հասկանալ, ինդեքս է, ցույց է տալիս եռամսյակը: Ընդ որում, սույն աշխատանքում օգտագործվել են 2003–2012 թթ. եռամսյակային տվյալները:

(1) էկոնոմետրիկ մոդելը գնահատելու նպատակով Դիքի-Ֆուլլերի թեստով պարզվել է, թե որ շարքերն են ոչ ստացիոնար: Ըստ ստացված արդյունքների՝ պարզ է դարձել, որ օգտագործվող բոլոր շարքերը ոչ ստացիոնար են և նրանք ստացիոնարացնելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել նրանց երկրորդ կարգի տարբերություններով մոդելը: Բացի դրանից կարելի է համարել, որ տվյալ եռամսյակի տնտեսական աճի տեմպը կարող է կախված լինել նախորդ եռամսյակների աճի տեմպից: Այսպիսով, հաշվի առնելով վերն ասվածը, նպատակահարմար ենք գտնում գնահատել հետևյալ մոդելը, որն ավելի օբյեկտիվորեն կնկարագրի վերը նշված կապվածությունները.

$$D(D(q_t)) = \beta_0 + \beta_1 D(D(m_t)) + \beta_2 D(D(h_t)) + \beta_3 D(D(l_{t-4})) + \beta_4 D(D(q_{t-4})) + \varepsilon_t \quad (2)$$

որտեղ՝

$D(D(q_t)), D(D(m_t)), D(D(h_t))$  -ն վերը նշված փոփոխականներն են երկրորդ կարգի տարբերություններով,  
 $D(D(q_{t-4}))$  -ն  $t-4$ -րդ եռամսյակի աճի տեմպի շարքն է երկրորդ կարգի տարբերությամբ,  
 $\beta_4 D(D(q_{t-4}))$  -ն  $t-4$ -րդ եռամսյակի տնտեսական աճի տեմպի երկրորդ կարգի տարբերությամբ շարքն է,  
 $\beta_0, \beta_1, \beta_2, \beta_3, \beta_4$  -ը էկոնոմետրիկ մոդելի անհայտ պարամետրերն են,  
 $\varepsilon_t$  -ն տվյալ մոդելի պատահական սխալն է  $t$ -րդ եռամսյակում:

Գնահատենք (2) մոդելը փոքրագույն քառակուսիների եղանակով, որի արդյունքում կստանանք հետևյալ գնահատված մոդելը.

$$D(D(q_t)) = 0.27D(D(m_t)) + 0.05D(D(h_t)) + 0.19D(D(l_{t-4})) - 0.20D(D(q_{t-4})) \quad (3)$$

Ստացված մոդելը վատահեղի է, քանի որ վերջինիս որակը շատ բարձր է՝ 0.79, բոլոր գործակիցների գրո լինելու հավանականությունները մոտ են զրոյի: Դարբինի հ վիճակագիրը վկայում է այն մասին, որ մոդելում ավտոկոռելյացիա չկա: Մոդելում բացակայում է ազատ անդամը, քանի որ գնահատման արդյունքներից պարզ դարձավ, որ այն նշանակալի չէ:

Այսպիսով, վերջնական մոդելը ներկայացնելու նպատակով կատարենք որոշակի թվաքանակյա գործողություններ, որի արդյունքում կունենանք.

$$\hat{q}_t = 117.73 + 0.27m_t + 0.05h_t + 0.19l_{t-4} - 0.20q_{t-4} \quad (4)$$

Ըստ ստացված (4) մոդելի արդյունքների՝ կարելի է կատարել հետևյալ հետևությունները.

1. Տվյալ եռամսյակի համախառն կապիտալի աճի տեմպի ավելացումը 1%-ով, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է տնտեսական աճի տեմպի ավելացմանը տվյալ եռամսյակում 0.3%-ով:
2. Մարդկային կապիտալի աճի տեմպի հավելանքը տվյալ եռամսյակում 1%-ով, այլ հավասար պայմաններում բերում է միջինում տնտեսական աճի տեմպի ավելացմանը 0.05%-ով:
3. t-4-րդ եռամսյակի աշխատուժի աճի տեմպի ավելացումը 1%-ով, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է տնտեսական աճի տեմպի ավելացմանը տվյալ եռամսյակում 0.2%-ով:
4. t-4-րդ եռամսյակի տնտեսական աճի տեմպի մեծացումը 1%-ով, հանգեցնում է տվյալ եռամսյակի տնտեսական աճի տեմպի անկման 0.2%-ով:
5. Ազատ անդամը ցույց է տալիս տնտեսական աճի միջին տեմպը՝ 117.73:

1. Թավադյան Ա.Ա., Թևիկյան Ա.Ռ., «Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության հիմնախնդիրները և դրանց ազդեցության գնահատումը տնտեսական աճի վրա», Երևան, «Տնտեսագետ», 2014
2. Тавадян А.А. „Пороги чувствительности постсоветской экономики“, Международный научно-общественный журнал „Мир перемен“, N2, 2013
3. Тавадян А.А. Интервалы неопределенности экономики, М., Наука, 2012  
[http://www.noravank.am/upload/pdf/Ashot\\_A.Tavadyan\\_Intervals\\_of\\_Uncertainty\\_of\\_Economy.pdf](http://www.noravank.am/upload/pdf/Ashot_A.Tavadyan_Intervals_of_Uncertainty_of_Economy.pdf)
4. „Оценка экономического эффекта интеграции Армении" А.А. Тавадян, руководитель авторского коллектива, ЕБЭР, Санкт-Петербург, 2013  
[http://www.eabr.org/general//upload/СІІ%20-%20izdania/2014/Армения-TC/doklad\\_20\\_ru\\_preview.pdf](http://www.eabr.org/general//upload/СІІ%20-%20izdania/2014/Армения-TC/doklad_20_ru_preview.pdf)
5. Теви́кян А.Р. «Сценарный анализ, как перспектива долгосрочного прогнозирования социально-экономического развития Армении», 21-ый ВЕК, 2013, N 4
6. Ernst & Young (2013) The 2013 world wide VAT. GST and sales tax guide. EYGM Limited.
7. Friedman M (1961) The Lag in Effect of Monetary Policy. Journal of Political Economy, Vol. 69. 1961. N 5
8. Giaidar Institute for Economic Policy (2009) Overview of Taxation in the CIS countries.
9. Roland G.; Foreword by Stiglitz JE (2008) Privatization: Successes and Failures. Columbian University Press. ISBN 978-0-231-51828-4
10. Otker-Robe I and Vavra D. and a Team of Economists (2007) Moving to Greater Exchange Rate Flexibility Operational Aspects Based
11. On Lessons from Detailed Country Experiences. International Monetary Found. Washington DC. ISBN 978-1-58906-624-3



*Руководитель исследовательской группы*

**АШОТ АГАСИЕВИЧ ТАВАДЯН**

доктор экономических наук, профессор

*Состав исследовательской группы*

**ОВАННИСЯН А.С.**

кандидат экономических наук, доцент

**АКОБЯН Т.Г.**

кандидат экономических наук, доцент

**НАЛЧАДЖАН В.Т.**

кандидат экономических наук, доцент

**ТЕВИКЯН А.Р.**

кандидат экономических наук, доцент

**ЕНГИБАРЯН Н.Г.**

кандидат экономических наук

### ***Макроэкономический анализ, моделирование и прогнозирование***

**В** работе систематизировано представлены макроэкономическая ситуация РА и тенденции развития. Исследована динамика ВВП и объемов производства по сферам экономики, тенденции развития экономики РА и соответствующие риски. Исследована влияние на внутренних экономических факторов на экономический рост. Сформулирована соответствующая эконометрическая модель. Дана оценка влияния валового капитала, человеческого капитала, трудовых ресурсов на темпы экономического развития.

Исследование может быть использована для комплексного исследования анализа макроэкономической ситуации и динамики экономического развития, а также для оценки факторов экономического роста ВВП.

*Head of research team*

**ASHOT AGASI TAVADYAN**

DSc in Economics, Professor

*Members of research team*

**HOVHANNISYAN H.S.**

PhD in Economics, Associate Professor

**HAKOBYAN T.H.**

PhD in Economics, Associate Professor

**NALCHAJYAN V.T.**

PhD in Economics, Associate Professor

**TEVIKYAN A.R.**

PhD in Economics, Associate Professor

**ENGIBARYAN N.H.**

PhD in Economics

***Macroeconomic Analysis, Modeling and Forecasting***

*The* paper systematically presents the macroeconomic situation and development trends of RA. The dynamics of GDP and production areas of the economy, economic trends and risks of RA as well as the impact on domestic economic factors on economic growth are investigated. Corresponding econometric model is formulated. The estimation of gross capital, human capital and labor on the pace of economic development is given.

The study can be used for a comprehensive study analysis of the macroeconomic situation and the dynamics of economic development, and to assess the factors of economic growth in GDP.



Հեղափոխական խմբի ղեկավար՝  
ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ԹԱՎԱԴՅԱՆ  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հեղափոխական խմբի անդամներ՝  
Հ.Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
Տ.Հ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Վ.Թ. ՆԱԼՉԱԶՅԱՆ  
Ա.Ա. ԹԵՎԻԿՅԱՆ  
Ն.Հ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

## ՄԱԿՐՈՏԵՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Խմբագիր՝ Վ. Միրզոյան  
Տեխնիկական խմբագիր՝ Ն. Խչեյան

Էջադրումը և սրբագրումը՝ Ռ. Պեպրոսյանի  
Ձևավորումը՝ Ն. Խչեյանի

Չափս՝ 70×108<sup>1/16</sup>:  
4,75 տպ. մամուլ:  
Տպաքանակ՝ 100:

